

Հայաստանի Հանրապետությունում
Եվրոպական վիճակագրության
փորձառության օրենսգրքի
իրականացման թեթև փորձագիտական
գնահատում

Վերջնական զեկույց
*Պատրաստվել է Գյունտեր Կոպշի, Կլաուդիա Յունկերի և
Սիվ Իրենե Պեդերսոնի կողմից*

2014թ. հուլիսի 18-ին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	3
ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄ.....	5
1 ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՍԿԶԲՈՒՆՔԻ.....	10
Սկզբունք 1: Պրոֆեսիոնալ անկախություն	10
Սկզբունք 2: Մանդատ տվյալների հավաքագրման համար.....	17
Սկզբունք 3: Ռեսուրսների համապատասխանություն.....	20
Սկզբունք 4: Որակի հանձնառություն	23
Սկզբունք 5: Վիճակագրական գաղտնիություն.....	28
Սկզբունք 6: Անկողմնակալություն և օբյեկտիվություն.....	31
Սկզբունք 15: Մատչելիություն և պարզություն	36
2 ԼԱՎ ՓՈՐՁԵՐԸ ՊԵՏՔ Է ԿԱՐԵՎՈՐՎԵՆ.....	44
3 ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ ԸՍՏ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՍԿԶԲՈՒՆՔԻ.....	
4 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	
1 Թեթև փորձագիտական գնահատման օրակարգ.....	
2 Հայաստանի Հանրապետության օրենքը “Պետական վիճակագրության մասին”	

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) թեթև փորձագիտական գնահատումը (ԹՓԳ) նախաձեռնվել է Եվրոստատի կողմից ֆինանսավորվող «Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) երկրների վիճակագրական համակարգերի և ընտրված վիճակագրական բնագավառների գնահատում» ծրագրի շրջանակում: GOPA-ի խորհրդատուները Եվրոստատի հետ պայմանագրի ներքո պատասխանատու էին ԹՓԳ-ն առընչվող բոլոր գործողությունների և խնդիրների կազմակերպման համար:

ԹՓԳ-ները հիմնված են ԵՎՀ (Եվրոպական վիճակագրական համակարգի) փորձագիտական գնահատումների կառուցվածքի և ընթացակարգերի վրա և մշակված են թեկնածու երկրների և զարգացած վիճակագրական համակարգ ունեցող երկրների համար: Այս գնահատումների նպատակներն են, մասնավորապես, գնահատել գնահատվող Ազգային Վիճակագրական Ինստիտուտի (ԱՎԻ) համապատասխանությունը Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի (ՓՕ) 1-6-րդ և 15-րդ սկզբունքներին, գնահատել ԱՎԻ-ի համակարգման դերը Ազգային Վիճակագրական Համակարգի (ԱՎՀ) շրջանակում, կարևորել փոխանցելի փորձերը, որոնք հարմար են խթանելու համապատասխանությունը ՓՕ-ին, և առաջարկել բարելավման գործողություններ ՓՕ-ի բոլոր սկզբունքների համար, որոնք անհրաժեշտ են ՓՕ-ի հետ լիարժեքորեն համապատասխանեցնելու տեսանկյունից:

Հարկ է նշել, որ ՀՀ ԱՎԾ-ն լրացրել է նոր ինքնագնահատման հարցաթերթ Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի իրականացման և հարցաթերթ ԱՎԻ-ների համակարգման դերի վերաբերյալ, որոնք կօգտագործվեն ԵՄ անդամ պետությունների փորձագիտական գնահատումների երկրորդ փուլում:

Գնահատման գործընթացը նախաձեռնվել է Եվրոստատի կողմից՝ ՀՀ ԱՎԾ-ի 2013թ. սեպտեմբերի խնդրանքի հիման վրա: Գնահատումն իրականացվել է երեք փորձագետների կողմից՝ առաջատար փորձագետ Գյունտեր Կոպշ (Գերմանիայի Դաշնային Վիճակագրական Գրասենյակի նախկին տնօրեն), Կլաուդիա Յունկեր (Եվրոստատ) և Սիվ Իրենե Պեդերսեն (Եվրոստատ): Գնահատման առաքելությունը տեղում այցելության ձևով տեղի է ունեցել 2014թ.

փետրվարի 10-14-ը (տես՝ հավելված 1): Գրավոր նյութերը և ՀՀ ԱՎԾ-ի կայքում հրապարակված փաստաթղթերի հղումները հասանելի են եղել մինչև և գնահատման առաքելության ընթացքում: Հիմնական փաստաթղթերը ներառել են լրացված ինքնագնահատման հարցաթերթերը (այսինքն՝ համապատասխանությունը ՓՕ-ին և համակարգման դերը), որոնք տրամադրվել են ՀՀ ԱՎԾ-ի կողմից 2014թ. հունվարի կեսերին:

Գնահատման թիմը շատ բարձր է գնահատել լավ նախապատրաստված հանդիպումները և հաղորդակցության թափանցիկությունը, ինչպես ՀՀ ԱՎԾ-ի անձնակազմի, այնպես էլ գործընկեր և շահառու կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Հույսով ենք, որ գնահատումն օգտակար կլինի ՀՀ ԱՎԾ-ի հետագա զարգացման համար:

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄ

Հիմնական արդյունքները (ներառյալ ազգային վիճակագրական ինստիտուտի համակարգման դերի գնահատումը).

- (1) Փորձագիտական գնահատման թիմը ձևավորել է լավ տպավորություն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (<< ԱՎԾ) վերաբերյալ կապված գնահատված ինստիտուցիոնալ ասպեկտների հետ: Հարցված շահառուներն ընդգծել են, որ էական բարելավումներ են ձեռք բերվել, մասնավորապես, տվյալների մատչելիության բնագավառում:
- (2) Հայաստանի Հանրապետության օրենքը “Պետական վիճակագրության մասին” ՀՀ ԱՎԾ-ի համար տրամադրում է ամուր իրավական հիմք կապված պրոֆեսիոնալ անկախության հետ: Համաձայն օրենքի՝ ՀՀ ԱՎԾ-ն մարմին է, որն “իր խնդիրներն իրականացնելիս անկախ է Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից”: Ավելին, օրենքը սահմանում է պետական վիճակագրական աշխատանքների համար պահանջները, որոնք ուղղակիորեն հիմնված են ՄԱԿ-ի Պաշտոնական Վիճակագրության Հիմնարար Սկզբունքների վրա: «Պետական վիճակագրություն» տերմինը համապատասխանում է «պաշտոնական վիճակագրություն» տերմինին, որն օգտագործվում է շատ այլ Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների վիճակագրական համակարգերում:
- (3) ՀՀ ԱՎԾ-ի ղեկավարն ունի ֆիքսված մանդատ վեց տարի ժամկետով և օրենքը պաշտպանում է նրան անհամապատասխան պաշտոնանկումից իր պաշտոնավարման ընթացքում: Տորամաբանական կլիներ օրենքում սահմանել ընտրության և նշանակման ընթացակարգը:
- (4) ՀՀ ԱՎԾ-ի պրոֆեսիոնալ անկախության և պետական վիճակագրության արտադրման օբյեկտիվության և անկողմնակալության համար հետագա երաշխիք է պաշտոնական վիճակագրության շատ հատուկ կազմակերպումը Հայաստանում, ՀՀ ԱՎԾ-ի կառավարման

հետ մեկտեղ, որը նաև գործում է որպես Վիճակագրության Պետական Խորհուրդ, որն իրավունք ունի ընդունելու ենթաօրենսդրական ակտեր (օրինակ՝ տարեկան վիճակագրական աշխատանքների ծրագիրը և ստանդարտները, որոնք պետք է օգտագործվեն):

- (5) Փորձագիտական գնահատման թիմի, ՀՀ ԱՎԾ-ի ղեկավարության և այլ անձնակազմի ու իր հիմնական շահառուների հետ տեղի ունեցած քննարկումների արդյունքում ձևավորվել է այն կարծիքը, որ ՀՀ ԱՎԾ-ն գործնականում գործում է անկախ և առկա չէ անտեղի միջամտություն պետական վիճակագրության արտադրման և տարածման մեջ:
- (6) Պետական վիճակագրությունը Հայաստանում արտադրվում է միայն ՀՀ ԱՎԾ-ի կողմից: Այլ պետական մարմինների կողմից արտադրված վիճակագրությունը կոչվում է «վարչական վիճակագրություն»: Սա նշանակում է, որ միայն ՀՀ ԱՎԾ-ն պետք է հետևի պետական վիճակագրության մասին օրենքի խիստ կանոններին, վարչական վիճակագրության արտադրողները՝ ոչ: Վարչական վիճակագրությունն օգտագործվում է տվյալներ արտադրող մարմինների նպատակների համար և որպես ներդրում՝ պետական վիճակագրության արտադրման համար:
- (7) Վիճակագրության պետական խորհրդին, սակայն, տրվում է իրավունք համակարգելու վարչական վիճակագրությունը: Այն ունի իրավասություն որոշելու վիճակագրական տվյալներ հավաքագրելու համար վարչական մարմինների կողմից կիրառվող ձևերը և ստանդարտները ու մեթոդաբանությունները: Կարևոր նպատակ է եղել բոլոր պետական մարմինների կողմից վարչական ռեգիստրների ձևավորումը և դրանց արժանահավատության բարելավումը: Երևում է Խորհրդի և ՀՀ ԱՎԾ-ի ազդեցությունը վարչական ռեգիստրների որակի վրա, սակայն, ոչ շատ ուժեղ:
- (8) Հիմնական համակարգման մեխանիզմներն են պետական վիճակագրական աշխատանքների եռամյա և տարեկան ծրագրերը: Փորձագիտական գնահատման թիմը կարծում է, որ պլանավորման և սպառողի խորհրդատվության գործընթացը պետք է լինի առավել ֆորմալացված, քան այն ներկայումս է: Արդեն իսկ ստեղծված գիտամեթոդաբանական խորհուրդը նոր կազմով պետք է վերահսկի և կառավարի վիճակագրական պլանավորման/խորհրդատվության գործընթացն ապագայում:

- (9) ՀՀ ԱՎԾ-ն ունի ուժեղ իրավական մանդատ հավաքագրելու վիճակագրական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ տվյալներ: Պատասխանատվությունը կիրառվող մեթոդների համար դրված է վիճակագրության պետական խորհրդի վրա: Վարչական տվյալների օգտագործումը լավ առաջընթաց է գրանցել վերջին տարիներին: Այնուամենայնիվ, հետագա ընդլայնումը և վարչական տվյալների օգտագործման հետ կապված ՀՀ ԱՎԾ-ի նպատակի հստակ ձևակերպումն անհրաժեշտ են:
- (10) ՀՀ ԱՎԾ-ն կնքել է մի շարք փոխըմբռնման հուշագրեր վիճակագրության այլ արտադրողների հետ բարելավելու համագործակցությունը: Համապարփակ փոխըմբռնման հուշագրեր շուտ պետք է կնքվեն վարչական վիճակագրության բոլոր արտադրողների հետ, որոնք տրամադրում են այդպիսի տվյալներ ՀՀ ԱՎԾ-ին պետական վիճակագրության արտադրման համար:
- (11) Փորձագիտական գնահատման թիմն ուներ հստակ պատկերացում, որ ՀՀ ԱՎԾ-ին պետական բյուջեից հատկացված ֆինանսական ռեսուրսները բավարար չեն տարեկան պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի իրականացման և անհրաժեշտ զարգացման գործունեությունների համար: ՀՀ ԱՎԾ-ն պետք է հիմնականում ապավինի օտարերկրյա դոնոր աջակցությանը, որը չափազանց կարևոր է եղել բազմաթիվ հետազոտական նախագծերի անցկացման և SS-ի սարքավորումների մոդերնիզացման համար:
- (12) Աշխատակիցների մեծ մասն աշխատում է ռեգիոնալ գրասենյակներում, լինելով պատասխանատու զուտ տվյալների հավաքագրման գործունեությունների համար, սահմանափակված հնարավորություններով և պահանջներով: Հիմնվելով էլեկտրոնային տվյալների հավաքագրման աճող օգտագործման և համայնքներում վարչական ռեգիստրների բարելավման վրա, պետք է ուսումնասիրվի պաշտոնների վերաբաշխումը ռեգիոնալ գրասենյակներից կենտրոնական գրասենյակ: Կենտրոնացված, անձնակազմի ներքին ուսուցմանն ուղղված ծրագրի մշակումը և իրականացումը չափազանց կարևոր է անձնակազմի արդյունավետության բարձրացման համար:
- (13) ՀՀ ԱՎԾ-ն խթանում է տվյալների որակի բարելավումն որպես

ընդհանուր սկզբունք ողջ գրասենյակում և խրախուսում է բոլոր վիճակագիրներին կիրառել որակի միջոցառումներ իրենց առօրյա աշխատանքում: Որակի հոչակագրերը բոլոր 136 վիճակագրական արտադրանքների համար հասանելի են կայքում՝ ըդգրկելով որակի չափումների տարրերը և մեթատվյալները:

- (14) Սակայն, որակի կառավարման ընդհանուր որևէ համակարգ առկա չէ և այսպիսով սիստեմատիկ մշտադիտարկում և որակի կառավարում չի իրականացվում: Չափազանց կարևոր կլինի ներդնել ընդհանուր որակի կառավարման համակարգի առավել լայն կառուցվածք՝ սկսելու սիստեմատիկ որակի կառավարման և ապահովման գործունեությունները և արմատավորելու որակի սկզբունքները բոլոր առօրյա գործունեություններում և անձնակազմի մոտ: Առաջարկվում է նշանակել որակի կառավարիչ և ստեղծել որակի կառավարման համար պատասխանատու միավոր:
- (15) Վիճակագրական գաղտնիությունը երաշխավորվում է “Պետական վիճակագրության մասին” ՀՀ օրենքով և խստորեն պահպանվում գործնականում: Վիճակագրական գաղտնիության որևէ խախտում չի եղել: Տուգանքները այնուամենայնիվ սահմանվում են օրենքով: Առկա են տվյալների անվտանգության համար սահմանված կարգեր, բայց ռեուրսների սղությունը կարող է դնել տվյալների անվտանգությունը վտանգի տակ: ՀՀ ԱՎԾ-ն որևէ սպառողի կամ հետազոտողի չի տրամադրում անհատական տվյալներ և սպառողները, ընդհանուր առմանք, ունեն լավ հասկացողություն վիճակագրական գաղտնիության անհրաժեշտության մասին:
- (16) Ներքին կիրառվող ընթացակարգերի փաստաթղթավորումը և հրապարակումը (օրինակ՝ ինչպես են հրապարակված վիճակագրությունում բացահայտված սխալները ուղղվում և հրապարակվում) կլինեք միջոց հանրային ընկալման հետագա բարելավման համար, որ ՀՀ ԱՎԾ-ն օբյեկտիվ և անկողմնակալ հաստատություն է:
- (17) ՀՀ ԱՎԾ-ն տարածում է բոլոր վիճակագրական տվյալներն անվճար իր կայքում և որոշ հաշվետվություններ հրապարակվում են որպես թղթային հրապարակումներ: ՀՀ ԱՎԾ-ն ունի տարածման մի քանի տվյալների բազաներ, ինչպիսիք են ArmStatBank-ը, ArmDevInfo-ն և տվյալների բազաներ տարբեր հետազոտություններից: Սպառողները,

ընդհանուր առմամբ, բավարարված են կայքով և թղթային հրապարակումներով: Որակի հռչակագրերի և այլ մեթատվյալների միջոցով սպառողներն, ընդհանուր առմամբ, տեղեկացվում են մեթոդաբանության վերաբերյալ և ունեն տվյալների որակի մասին լավ հասկացողություն: ՀՀ ԱՎԾ-ն, սակայն, չունի համապարփակ մեթատվյալների համակարգ իր ողջ վիճակագրության համար: Պատվերով մշակված ուսումնասիրությունները տրամադրվում են անվճար գրավոր խնդրանքով և վիճակագրության պետական խորհրդի հաստատումից հետո, բայց, սովորաբար, չեն հրապարակվում ՀՀ ԱՎԾ-ի կողմից: Նոր թողարկված տվյալներին հավասար մուտքն ապահովվում է ՀՀ ԱՎԾ-ի կողմից: Հետազոտողներին հասանելի տվյալները դրանք տվյալների բազաների միջոցով հասանելի տվյալներն են և հետազոտողների կողմից հայցված անվանագերծված տվյալները:

- (18) ՀՀ ԱՎԾ-ի ղեկավարությունն արտահայտել է իր հստակ մտադրությունը ձեռնարկելու հետագա քայլեր Փորձառության Օրենսգրքին լիովին համապատասխանելու ուղղությամբ: Հավելվածում նշված և ղեկավարության ու ավագ անձնակազմի հետ քննարկված բարելավման գործողությունները պետք է լինեն օգտակար:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՍԿԶԲՈՒՆՔԻ

Սկզբունք 1. Պրոֆեսիոնալ անկախություն

Վիճակագրական մարմինների պրոֆեսիոնալ անկախությունն այլ քաղաքական, կարգավորիչ կամ վարչական վարչություններից և մարմիններից, ինչպես նաև մասնավոր հատվածի օպերատորներից ապահովում է Եվրոպական վիճակագրության արժանահավատությունը:

Ընդհանուր գնահատում.

«Պեղական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածը (ստորագրված Հայաստանի Նախագահի կողմից 2000թ. ապրիլի 26-ին) սահմանում է պեղական վիճակագրություն իրականացնող մարմինը, որն անվանվում է «Ազգային վիճակագրական ծառայություն և նրա տարածքային և գործառնական ստորաբաժանումներ»: Այն, համաձայն օրենքի, **հանրային շահին ուղղված գործառույթներ իրականացնող մարմին է, որն «իր խնդիրներն իրականացնելիս անկախ է Հայաստանի Հանրապետության պեղական և տեղական ինքնակառավարման մարմիններից»:** «Պեղական վիճակագրություն» տերմինը համապատասխանում է «պաշտոնական վիճակագրություն» տերմինին, որն օգտագործվում է շատ այլ Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների վիճակագրական համակարգերում: Պեղական վիճակագրությունն արտադրվում է միայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից: Այլ պեղական մարմինների կողմից արտադրված վիճակագրությունը կոչվում է «վարչական վիճակագրություն»: Սա այն վիճակագրությունն է, որն օգտագործվում է տվյալներ արտադրող մարմնի նպատակներով և որպես ներդրում պեղական վիճակագրության արտադրման համար:

ՀՀ ԱՎԾ-ի կառավարման բարձրագույն մարմինը, ոչ նախարարություն է, ոչ կառավարությունն ընդհանուր առմամբ, ոչ էլ Խորհրդարանը, սակայն, համաձայն «Պեղական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի Վիճակագրության Պեղական Խորհուրդն է, որին տրված է

իրավունք ընդունելու ենթաօրենսդրական ակտեր վիճակագրության բնագավառում: ՀՀ ԱՎԾ-ի նախագահը մինչև նույն ժամանակ զբաղեցնում է Խորհրդի Նախագահի պաշտոնը, և Խորհրդի մյուս վեց անդամները, ի տարբերություն այլ վիճակագրական գրասենյակների վարչությունների ղեկավարների, ՀՀ ԱՎԾ-ի շրջանակում նույնպես իրականացնում են կառավարման գործառույթներ: Ավելին, «Պետական վիճակագրության մասին» օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է պետական վիճակագրության գոծունեությունների համար ներկայացվող պահանջները, որոնք ուղղակիորեն հիմնված են ՄԱԿ-ի Պաշտոնական Վիճակագրության Հիմնարար Սկզբունքների վրա: «Պետական վիճակագրության մասին» օրենքը նույնպես ուժեղ դեր է տալիս ՀՀ ԱՎԾ-ին և իր բարձրագույն մարմնին՝ Վիճակագրության Պետական Խորհրդին պետական վիճակագրական աշխատանքների եռամյա և պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերի պլանավորման գործընթացի միջոցով:

Օրենքը ՀՀ ԱՎԾ-ի համար ապահովում է ամուր իրավական հիմք կապված պրոֆեսիոնալ անկախության հետ: Վիճակագրական գրասենյակի իրավական կարգավիճակը լավ նախադրյալ է փորձառության օրենսգրքի անկախության սկզբունքին լիովին համապատասխան լինելու համար: Սակայն, դա ոչ մի երաշխիք չէ: Պաշտոնական վիճակագրություն արտադրողի պրոֆեսիոնալ անկախությունը պետք է նաև ընդունված լինի գործնականում, մասնավորապես, կառավարության կողմից: Փորձագիտական գնահատման թիմի, ՀՀ ԱՎԾ-ի ղեկավարության և այլ անձնակազմի ու իր հիմնական շահառուների հետ տեղի ունեցած քննարկումների արդյունքում ձևավորվել է այն կարծիքը, որ ՀՀ ԱՎԾ-ն գործնականում գործում է անկախ և առկա չէ անտեղի միջամտություն պետական վիճակագրության արտադրման և տարածման մեջ:

Ցուցանիշ 1.1. Ազգային վիճակագրական ինստիտուտների անկախությունը քաղաքական և այլ արտաքին միջամտությունից վիճակագրության մշակման, արտադրման և տարածման մեջ ամրագրված է օրենքում և ապահովված այլ վիճակագրական մարմինների համար:

“Պետական վիճակագրության մասին” օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է հիմնարար սկզբունքները, որոնք պետք է հետևվեն

ՀՀ ԱՎԾ-ի կողմից իր բոլոր այն գործողություններում, որոնք իրականացվում են արտադրելու և տարածելու պետական վիճակագրություն: Ի թիվս այլոց, վիճակագրության օբյեկտիվությունը և չեզոքությունը, վիճակագրական տվյալների անվանազերծվածությունը, վիճակագրական տեղեկատվության ամբողջությունը և մատչելիությունը հստակորեն նշված են, բայց առանց որևէ բացատրության կամ սահմանման, ինչը պետք է լրացվի օրենքի ապագա վերանայման մեջ: Ընդ որում, նման փոփոխությունը պետք է ներառի հստակ հղում անկախությանը կապված վիճակագրական մեթոդների, ստանդարտների և ընթացակարգերի, ինչպես նաև վիճակագրական թողարկումների բովանդակության և ժամկետների վերաբերյալ որոշումների հետ: “Պետական վիճակագրության մասին” օրենքը գործում է միայն ՀՀ ԱՎԾ-ի համար որպես պետական վիճակագրության միակ արտադրողի, և ոչ թե վարչական վիճակագրություն արտադրող այլ մարմինների համար:

Ցուցանիշ 1.2. Ազգային վիճակագրական ինստիտուտների ղեկավարները և, անհրաժեշտության դեպքում, այլ վիճակագրական մարմինների ղեկավարներն ունեն բավականաչափ բարձր հիերարխիկ դիրք ապահովելու բարձր մակարդակի մուտք քաղաքական իշխանություններին և վարչական պետական մարմիններին: Նրանք պետք է լինեն բարձրագույն պրոֆեսիոնալ մակարդակի:

ՀՀ ԱՎԾ-ի նախագահի հիերարխիկ դիրքը համեմատելի է ամենաբարձր աստիճանի պետական ծառայողների հետ: Նա նշանակվում է Հանրապետության Նախագահի կողմից, ինչը համեմատելի է այլ անկախ պետական մարմինների ղեկավարների նշանակման հետ Հայաստանում և մասնակցում է կառավարության նիստերին առանց կառավարության անդամ լինելու: ՀՀ ԱՎԾ-ի ղեկավարության հետ քննարկումներում համաձայնեցին, որ մասնակցությունը կառավարության նիստերին ունի առավելություններ և թերություններ, ՀՀ ԱՎԾ-ի կարծիքով առավելությունները գերակշռող են:

Ցուցանիշ 1.3. Ազգային վիճակագրական ինստիտուտների ղեկավարները և անհրաժեշտության դեպքում, այլ վիճակագրական մարմինների ղեկավարները պատասխանատվություն են կրում ապահովելու, որ

վիճակագրությունը մշակվի, արտադրվի և տարածվի անկախ կերպով:

Համաձայն “Պետական վիճակագրության մասին” օրենքի 9-րդ հոդվածի ՀՀ ԱՎԾ-ն ղեկավարվում է գրասենյակի նախագահի կողմից, ով ունի խնդիր կազմակերպելու պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի իրականացումը համապատասխան օրենքով սահմանված սկզբունքներին: Ծառայության նախագահը միևնույն ժամանակ Վիճակագրության Պետական Խորհրդի նախագահն է, որը հանդիսանում է ՀՀ ԱՎԾ-ի կառավարման բարձրագույն մարմինը: Ինչպես արդեն նշվեց, “Պետական վիճակագրության մասին” օրենքը գործում է միայն ՀՀ ԱՎԾ-ի համար, և ոչ թե վարչական վիճակագրություն արտադրող այլ մարմինների համար:

Ցուցանիշ 1.4. Ազգային վիճակագրական ինստիտուտների ղեկավարները և անհրաժեշտության դեպքում, այլ վիճակագրական մարմինների ղեկավարները պատասխանատվություն ունեն որոշելու վիճակագրական մեթոդները, ստանդարտները և ընթացակարգերը և վիճակագրական թողարկումների բովանդակությունն ու ժամկետները:

Վիճակագրության պետական խորհուրդը, որը ղեկավարվում է ՀՀ ԱՎԾ-ի նախագահի կողմից, որոշում է ծրագրի իրականացման համար օգտագործվող մեթոդները և հաստատում է վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագիրը, որը ներառում է պլանավորված հրապարակումներն ու դրանց պարբերականությունը: Գնահատման թիմը ձևավորել է կարծիք, որ վիճակագրական մեթոդների, ստանդարտների, ընթացակարգերի և վիճակագրական թողարկումների բովանդակության և ժամկետների վերաբերյալ որոշումներն ընդունելու պատասխանատվության հետ կապված ՀՀ ԱՎԾ-ն գործնականում համապատասխանում է Փորձառության Օրենսգրքի ստանդարտներին: Գնահատման ընթացքում հարցվածներից կազմվել է դրական պատկերացում ՀՀ ԱՎԾ-ի անկախության վերաբերյալ արտադրման և տարածման գործունեություններում:

Ցուցանիշ 1.5. Վիճակագրական աշխատանքների ծրագրերը հրապարակվում են, և պարբերական հաշվետվությունները նկարագրում են առաջընթացը:

Պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի նպատակները և պլանավորման գործընթացը կարգավորվում են “Պետական վիճակագրության մասին” օրենքի 11-րդ հոդվածով: Ծրագիրը նախագծվում է ՀՀ ԱՎԾ-ի կողմից, հաստատվում է Խորհրդի կողմից, այնուհետև ներկայացվում կառավարության կողմից Ազգային ժողովի հաստատմանը: Այն ներառում է երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման և զարգացման համար վիճակագրական գործունեության հիմնական ուղղությունները: Պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի իրականացման համար ՀՀ ԱՎԾ-ի կողմից մշակվում են վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերը և ընդունվում Վիճակագրության Պետական Խորհրդի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաստատումից 1 ամիս հետո:

Մեկնաբանությունների և նոր պահանջների արտահայտման համար պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի, ինչպես նաև պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրի նախագծերը շրջանառվում են շահագրգիռ կողմերի միջև: ՀՀ ԱՎԾ-ն այդ կարծիքներին տրամադրում է գրավոր պատասխաններ: Սպառողները, ովքեր համաձայն չեն ՀՀ ԱՎԾ-ի պատասխանի հետ, հրավիրվում են երկկողմանի հանդիպումների: Այնուամենայնիվ, երևում է, որ պլանավորման գործընթացում կարիք կա հիմնական սպառողների խմբերի ներգրավման բարելավման համար, մասնավորապես, կապված տնտեսության մասնավոր հատվածի և լայն հասարակության հետ: Հետևաբար, պետք է մշակվի հայեցակարգ սպառողների բոլոր խմբերի խորհրդատվության բարելավման համար պետական վիճակագրական աշխատանքների եռամյա և տարեկան ծրագրերի նախապատրաստական գործընթացում: Առաջարկվում է ակտիվացնել արդեն գոյություն ունեցող գիտամեթոդաբանական խորհուրդը, որը նոր կազմով, ապագայում կիրականացնի գործառույթներ, որոնք իրականացնում են վիճակագրական խորհուրդները այլ երկրներում: Նման արտադրողի և սպառողների խորհրդի

կանոնավոր հանդիպումները կընձեռեն ծրագրերի նախագծերի բազմակողմ քննարկումների հնարավորություն:

ՀՀ ԱՎԾ-ն նախագծում և ներակայացնում է Ազգային ժողով հաշվետվություններ պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրերի իրականացման վերաբերյալ: Վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերի իրականացման վերաբերյալ հաշտվետվությունները նույնպես նախագծվում են ՀՀ ԱՎԾ-ի կողմից և հաստատվում վիճակագրության Պետական Խորհրդի կողմից:

Ցուցանիշ 1.6. Վիճակագրական թողարկումները հստակ տարանջատվում են և թողարկվում առանձին քաղաքական/քաղաքականության հայտարարություններից:

ՀՀ ԱՎԾ-ն հրապարակում է իր սեփական թողարկումները, որոնք հստակ ճանաչելի են, որպես եկող ՀՀ ԱՎԾ-ից: Ակնհայտ է ՀՀ ԱՎԾ-ի հստակ քաղաքականությունը չներառելու որևէ քաղաքական մեկնաբանություններ իր վիճակագրական թողարկումներում: ՀՀ ԱՎԾ-ն ունի ներքին ընթացակարգեր մամուլի հաղորդագրությունների մշակման և հրապարակման ու մամուլի ասուլիսների կազմակերպման համար, սակայն, դրանք դեռ չեն հրապարակվել: Մամուլի հաղորդագրություններն անգլերենով (օրինակ՝ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2014թ. մարտին») հրապարակված 2014թ. ապրիլի 22-ին, «Հայաստանի Հանրապետությունում սպառողական գների ինդեքսը 2014թ. հունվար-մարտ ամիսներին», հրապարակված 2014թ. մարտի 31-ին, «Սոցիալական պատկերը և աղքատությունը Հայաստանում 2013թ.», հրապարակված 2013թ. նոյեմբերի 26-ին և այլն) հիմնականում ներառում են աղյուսակներ և միայն բացառիկ դեպքերում մեկնաբանություններ (օրինակ՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2013թ.» հրապարակված 2013թ. նոյեմբերի 26-ին):

Ցուցանիշ 1.7. Ազգային վիճակագրական ինստիտուտը և անհրաժեշտության դեպքում, այլ վիճակագրական մարմինները մեկնաբանում են հրապարակված վիճակագրական հարցերը, ներառյալ քննադատությունները և պաշտոնական

վիճակագրության սխալ օգտագործումները, որքանով, որ համարում են հարմար:

“Պետական վիճակագրության մասին” օրենքը չի ներառում ՀՀ ԱՎԾ-ի իրավունքը հրապարակավ արձագանքելու պետական վիճակագրության քննադատության կամ սխալ օգտագործման դեպքում: Սակայն, ակնհայտ է, որ գոյություն ունի ներքին քաղաքականություն, թե ինչպես միջամտել հրապարակայնորեն նման դեպքի առաջացման ժամանակ: ՀՀ ԱՎԾ-ի տարածման բաժինը պարբերաբար վերահսկում է ՁԼՄ-ների արձագանքները վիճակագրական մամուլի հաղորդագրություններին և ՀՀ ԱՎԾ-ն արձագանքում է հրապարակված պետական վիճակագրական տվյալների լուրջ սխալ օգտագործման դեպքերում: ՀՀ ԱՎԾ-ն չի միջամտում վիճակագրական տվյալների սխալ օգտագործման դեպքերում քաղաքական բանավեճերում: Առաջարկվում է հստակորեն սահմանել ՀՀ ԱՎԾ-ի հրապարակայնորեն միջամտելու իրավունքը պետական վիճակագրական տվյալների քննադատության և սխալ օգտագործման դեպքերում և հրապարակել ներքին քաղաքականություն, թե ինչպես արձագանքել կայքում:

Ցուցանիշ 1.8. Ազգային վիճակագրական ինստիտուտների ղեկավարների և անհրաժեշտության դեպքում, այլ վիճակագրական մարմինների ղեկավարների նշանակումը հիմնված է միայն պրոֆեսիոնալ ունակության վրա: Պատճառները, որոնց հիման վրա պաշտոնավարումը կարող է դադարեցվել սահմանված են իրավական շրջանակում: Դրանք չեն կարող ներառել պրոֆեսիոնալ կամ գիտական անկախությունը վարկաբեկող պատճառներ:

“Պետական վիճակագրության մասին” օրենքը տրամադրում է ՀՀ ԱՎԾ-ի նախագահին ֆիքսված մանդատ վեց տարի ժամկետով: Վերահաստատումը հնարավոր է գործնականում (ներկայիս Նախագահն արդեն իր երրորդ ժամկետում է): Նա նշանակվում է Հանրապետության Նախագահի կողմից, որն ընդունված պրակտիկա է անկախ պետական մարմինների ղեկավարների համար Հայաստանում: Պահանջվող որակավորումը հստակ սահմանված է “Պետական վիճակագրության մասին” օրենքում: Ավելին, օրենքը պաշտպանում է Նախագահին անհամապատասխան պաշտոնանկությունից իր

պաշտոնավարման ընթացքում, որը կարող է դիտարկվել, որպես ՀՀ ԱՎԾ-ի պրոֆեսիոնալ անկախության հետագա ինստիտուցիոնալ երաշխիք: Ազատման համար պատճառները սահմանված են օրենքում, որոնք չեն վարկաբեկում պրոֆեսիոնալ կամ գիտական անկախությունը: Օրենքը չի ներառում դրույթներ ընտրության ընթացակարգերի վերաբերյալ ՀՀ ԱՎԾ-ի Նախագահի կամ Վիճակագրության Պետական Խորհրդի անդամների նշանակման համար: Նույնիսկ, եթե հարցը կարգավորված է Պետական ծառայության մասին օրենքով Հայաստանի Հանրապետության օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների համար, նպատակահարմար կլիներ ներառել ընտրության և նշանակման ընթացակարգերի նկարագրությունը “Պետական վիճակագրության մասին” օրենքում:

Սկզբունք 2. Մանդատ տվյալների հավաքագրման համար

Վիճակագրական մարմիններն ունեն հստակ իրավական մանդատ հավաքագրելու տեղեկատվություն եվրոպական վիճակագրական նպատակների համար: Կառավարման մարմինները, ձեռնարկությունները և տնային տնտեսություններն ու լայն հասարակությունը կարող են օրենքով ստիպված լինել վիճակագրական մարմինների պահանջով հասանելի դարձնել կամ ներկայացնել տվյալներ եվրոպական վիճակագրական նպատակների համար:

Ընդհանուր գնահատում.

Մասնավորապես, “Պետական վիճակագրության մասին” օրենքի 12-րդ հոդվածը պետական վիճակագրական աշխատանքների եռամյա և տարեկան ծրագրերի հետ մեկտեղ ՀՀ ԱՎԾ-ին տրամադրում են ուժեղ իրավական մանդատ հավաքագրելու վիճակագրական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ տվյալներ: ՀՀ ԱՎԾ-ն իրավունք ունի հավաքագրել տվյալներ ուղղակիորեն վիճակագրական միավորներից և թույլատրվում է մուտք գործել վարչական ռեգիստրներ: Օգտագործվող մեթոդների համար պատասխանատվությունը կրում է Վիճակագրության Պետական Խորհրդը: Օրենքը սահմանում է վիճակագրական տեղեկություններ տրամադրողների պարտավորությունը

պատասխանելու վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրի պետական վիճակագրական դիտարկումներին անվճար: Սակայն, տնային տնտեսությունների հետազոտություններում պատասխանը սովորաբար կամավոր է, մինչդեռ պատասխանը մարդահամարի և գյուղատնտեսական համադարձ հաշվառման ժամանակ պարտադիր է: Պարտադիր հետազոտություններում և հաշվառումներում չպատասխանելու դեպքում օրենքը ներառում է ֆիզիկական և իրավաբանական անձանց տուգանելու կանոններ: Այդ կանոնները կիրառվում են այն դեպքում, երբ բիզնեսները չեն տրամադրում իրենց տվյալները կամ չեն տրամադրում ճշգրիտ տեղեկատվություն: Վարչական տվյալների օգտագործումը գրանցել է լավ առաջընթաց վերջին տարիներին: Հետագա ընդլայնումն այնուամենայնիվ անհրաժեշտ է:

Ցուցանիշ 2.1. Վիճակագրական մարմինների մանդատը հավաքագրելու տեղեկատվություն Եվրոպական վիճակագրության մշակման, արտադրման և տարածման համար ամրագրված է օրենքում:

Վիճակագրական տվյալներ հավաքագրելու ՀՀ ԱՎԾ-ի մանդատը պետական վիճակագրության արտադրման և տարածման համար ամրագրված է “Պետական վիճակագրության մասին” օրենքում և վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերում, վերջինս էլ, լինելով ենթաօրենսդրական ակտ, ընդունվում է Վիճակագրության Պետական Խորհրդի կողմից: Վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերը ներառում են հետազոտությունների ցանկ, որոնք պետք է իրականացվեն ՀՀ ԱՎԾ-ի կողմից և օրենքի 12-րդ հոդվածը ապահովում է իրավական հիմք այդ հետազոտությունների իրականացման համար (օրենքում կոչվում են «պետական վիճակագրական դիտարկումներ»): ՀՀ ԱՎԾ-ի ղեկավարությունը նշել է, որ պատասխանների մակարդակը, ընդհանուր առմամբ, բավարար է: Չպատասխանելու հետ կապված խնդիրներ առկա են միայն մասնավոր տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների, մասնավորապես, Երևանի և բարձր եկամուտներով տնային տնտեսությունների համար:

Ձեռնարկությունների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու և ՀՀ ԱՎԾ-ի արդյունավետությունը բարելավելու նպատակով նախապատրաստվում է Ինտերնետի միջոցով առցանց հաշվետվությունների ներկայացման ստեղծումը: Այս պահին

տվյալների տրամադրումը հնարավոր է միայն էլեկտրոնային փոստով: Համակարգչային Աջակցությամբ Հարցազրույցի (CAI) տեխնիկաները չեն կարող օգտագործվել դեռ տնային տնտեսության և գների վիճակագրությունում անհրաժեշտ սարքավորումների բացակայության պատճառով:

Ցուցանիշ 2.2. Վիճակագրական մարմիններին օրենքով թույլ է տրվում օգտագործել վարչական տվյալներ վիճակագրական նպատակների համար:

ՀՀ ԱՎԾ-ին տրված է վարչական ռեգիստրների տվյալների մուտքի և օգտագործման իրավունք: Օրենքում համապատասխան կանոնակարգը, սակայն, շատ հակիրճ է և ոչ ամբողջությամբ հստակ («Դիտարկումներն ըստ ձևերի իրականացվում են ... միջոցով, ինչպես նաև հավաքագրված տվյալների օգտագործմամբ (ներառյալ ստացված վարչական ռեգիստրներից) »):

Վիճակագրության Պետական Խորհուրդն ունի վարչական վիճակագրության համակարգման խնդիր Հայաստանի Հանրապետությունում, ինչն ամրագրված է վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրում:

ՀՀ ԱՎԾ-ն լավ առաջընթաց է գրանցել վերջին տարիների ընթացքում վիճակագրական նպատակների համար վարչական տվյալների օգտագործման մեջ:

Այն արդեն իսկ կնքել է մի շարք փոխըմբռման հուշագրեր համագործակցության և վիճակագրական տվյալների փոխանակման բարելավման համար տվյալներ այլ արտադրողների հետ (օրինակ՝ Կենտրոնական բանկ, Պետական եկամուտների կոմիտե, Էկոնոմիկայի նախարարություն և Արդարադատության նախարարություն: Տրանսպորտի և կապի նախարարությունը տրամադրում է տվյալներ Վարչապետի որոշման հիման վրա): Պետական վիճակագրական նպատակների համար վարչական տվյալների օգտագործման հետագա բարելավումը և ընդլայնումն, այնուամենայնիվ, ՀՀ ԱՎԾ-ի նպատակն է և արտահայտված է 2013-2015թթ. պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրում: ՀՀ ԱՎԾ-ն նշել է իր ինքնագնահատման ժամանակ, որ որոշ վարչական ռեգիստրներ դեռ բացակայում են և, որ որոշ ռեգիստրներն էլ ցածր որակի են: ՀՀ ԱՎԾ-ն Պետական խորհրդի աջակցությամբ պետք է ձգտի աջակցելու նախարարություններին և այլ պետական մարմիններին իրենց վարչական ռեգիստրները պատշաճ

կառավարելու և հետագայում ամրապնդելու իր ազդեցությունը ռեգիստրների բովանդակության վրա: Մուտքը և վարչական ռեգիստրներից տվյալների օգտագործումը ցույց են տալիս, որ Պետական Խորհուրդը գործում է արդյունավետ որպես վարչական վիճակագրության համակարգող: Խորհուրդի համակարգման լիազորությունը վերաբերում է, մասնավորապես, այնպիսի հիմնահարցերին, ինչպիսիք են օգտագործվող ստանդարտներն ու մեթոդները:

Ցուցանիշ 2.3. Վիճակագրական մարմինները կարող են ստիպել պատասխանելու վիճակագրական հետազոտություններին իրավական ակտի հիման վրա:

Բոլոր տվյալների հավաքագրումները բիզնեսներից պարտադիր են: Չպատասխանելու կամ սխալ պատասխանելու դեպքերում, բիզնեսները կտուգանվեն, եթե չարձագանքեն հիշեցմանը: Մարդահամարը, ինչպես նաև գյուղատնտեսական համատարած հաշվառումը տնային տնտեսությունների համար պարտադիր են, մինչդեռ տնային տնտեսությունների հետազոտություններին պատասխանելը՝ կամավոր: Ինչպես արդեն նշվել է, համաձայն ՀՀ ԱՎԾ-ի ղեկավարության պատասխանների մակարդակը բիզնես վիճակագրությունում բավարար է: Տնային տնտեսության վիճակագրությունում առկա են խնդիրներ կապված չպատասխանելու հետ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության համար:

Սկզբունք 3. Ռեսուրսների համապատասխանություն

Վիճակագրական մարմիններում առկա ռեսուրսները բավարար են Եվրոպական վիճակագրության պահանջները բավարարելու համար:

Ընդհանուր գնահատում.

Համաձայն ինքնագնահատման հարցաթերթում ՀՀ ԱՎԾ-ի պարասխանների և փորձագիտական գնահատման այցի ժամանակ ՀՀ ԱՎԾ-ի ղեկավարության, ինչպես նաև ավագ և կրտսեր անձնակազմի և սպառողների տարբեր խմբերի հետ քննարկումների, ակնհայտ է, որ պետական բյուջեից ՀՀ ԱՎԾ-ին

հարկացված ֆինանսական ռեսուրսները բավարար չեն վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրի և անհրաժեշտ զարգացման գործունեությունների իականացման համար: ՀՀ ԱՎԾ-ն պետք է ապավինի արտաքին դոնորների աջակցությանը, որը չափազանց կարևոր էր շարժվող հեղափոխությունների անցկացման և սարքավորումների արդիականացման ու ձեռքբերման համար: Ֆինանսական ռեսուրսների պակասն ունի բացասական ազդեցություն SS-ի սարքավորումների մոդերնիզացման վրա, մասնավորապես, և դրա հետ մեկտեղ, աշխատանքների գործընթացների արդյունավետության վրա:

Ցուցանիշ 3.1. Ընթացիկ վիճակագրական պահանջները բավարարելու համար առկա են համապատասխան և քանակական ու որակական առումով մարդկային, ֆինանսական և համակարգչային ռեսուրսներ:

Ընդհանուր թվով 360 անձնակազմի անդամներ, որից 334-ը քաղաքացիական ծառայողներ են և մոտ 400-ը պայմանագրային աշխատակիցներ, ՀՀ ԱՎԾ-ի անձնակազմի ներուժը կարծես համարժեք է Հայաստանի չափի երկրի համար: Քաղաքացիական ծառայողների կրթության մակարդակը բավականին բարձր է, մոտ 90%-ն ունի համալսարանական աստիճան և ՀՀ ԱՎԾ-ն գնահատում է անձնակազմի գիտելիքները և հմտությունները ինքնագնահատման մեջ: Սակայն, անձնակազմի մեծ մասը աշխատում է ռեգիոնալ գրասենյակներում, լինելով պատասխանատու զուտ տվյալների հավաքագրման գործունեությունների համար, սահմանափակված հնարավորություններով և պահանջներով: Սա ընդհանրական է երկրների համար, որոնք մաս են եղել Խորհրդային Միության: Դրա պատճառով կենտրոնական գրասենյակի աշխատակիցների թվաքանակը (181) բավականին ցածր է զանազան առաջադրանքների կատարման տեսանկյունից: Համայնքներում էլեկտրոնային տվյալների հավաքագրման հետագա իրականացման և վարչական ռեգիստրների հետագա բարելավման համար պաշտոնների վերաբաշխումը ռեգիոնալ գրասենյակներից կենտրոնական գրասենյակ պետք է ուսումնասիրվի: Հարկ է նշել, որ ՀՀ ԱՎԾ-ն կարող է ընդունել նման որոշում Քաղաքացիական Ծառայության մասին օրենքի հիման վրա:

Կենտրոնական գրասենյակը կազմված է բազմաթիվ բավականին փոքր ստորաբաժանումներից, ինչը կարող է խոչընդոտներ ստեղծել ծանրաբեռնվածության փոփոխության դեպքում, դրանով իսկ բարձրացնելով ուշացումների ռիսկը, երբ անձնակազմի անդամները փոխվում են կամ ինչ- որ պատճառով ներկա չեն: Գրասենյակի առավել ճկուն կառուցվածք պետք է ուսումնասիրվի:

ՀՀ ԱՎԾ-ում աշխատավարձերը համեմատելի են պետական ծառայության այլ հատվածների հետ, սակայն, ոչ տնտեսության մասնավոր հատվածի, և ոչ էլ Կենտրոնական բանկի հետ: Երիտասարդ անձնակազմի հոսունությունը խնդիր է, մասնավորապես, ՏՏ-ի ոլորտում:

ՀՀ ԱՎԾ-ն չունի անձնակազմի սիստեմատիկ ուսուցման ծրագիր: Անձնակազմը կարող է մասնակցել տեղական ուսուցման ծրագրերի այլ հաստատություններում կամ միջազգային ուսուցման դասընթացներին, եթե ռեսուրսները թույլ են տալիս: Անձնակազմի նման ուսուցումը, սակայն, սիստեմատիկ բնույթ չի կրում և գրեթե բոլոր առարկաներով կամ ոլորտային ուսուցումը տրամադրվում է է աշխատանքի ընթացքում: Երիտասարդ անձնակազմը կարծես, գրեթե ոչ մի հնարավորություն չունի որևէ ուսուցմանը մասնակցելու, մինչդեռ սիստեմատիկ և կանոնավոր ուսուցումը անհապաղ անհրաժեշտ է, մասնավորապես, երիտասարդ անձնակազմի համար: ՀՀ ԱՎԾ-ն պետք է հետևաբար աշխատի կենտրոնացված և անձնակազմի ներքին ուսուցմանն ուղղված ծրագրի մշակման և իրականացման ուղղությամբ:

ՏՏ-ի շատ ցածր բյուջեն հնարավորություն չի ընձեռում ՏՏ-ի սարքավորումների անհրաժեշտ նորացման համար: ՏՏ-ի ծախսերը կազմել են ՀՀ ԱՎԾ-ի 2013թ. տարեկան բյուջեի միայն 1.5%-ը: Մասնավորապես, ռեգիոնալ գրասենյակներում ՏՏ-ի սարքավորումները հնացած են և ոչ բավարար քանակով: Հին համակարգիչներից շատերը չեն կարող աշխատել նոր ծրագրային ապահովմամբ: Յուրաքանչյուր ծրագրի երկու տարբերակները և կիրառումը պետք է մշակվեն այնպես, որ հին և նոր համակարգիչները կարողանան օգտագործվել: Ստանդարտ ծրագրային ապահովումը նույնպես պահպանվում է հին և նոր տարբերակներով: ՀՀ ԱՎԾ-ն անհապաղ կարիք ունի բարելավման այս բնագավառում և աջակցությունը դոնորներից թվում է թե առավել իրատեսական միջոցն է ստանալու անհրաժեշտ

ռեսուրսները: ՀՀ ԱՎԾ-ն պետք է, այնուամենայնիվ, շարունակի նպաստել ՏՏ-ի համար բավարար ռեսուրսների տրամադրմանը և պետական բյուջեից հետազոտությունների իրականացմանը:

Սկզբունք 4. Որակի հանձնառություն

Վիճակագրական մարմինները պատավորություն են կրում որակի համար: Նրանք սիստեմատիկաբար և պարբերաբար բացահայտում են ուժեղ և թույլ կողմերը շարունակաբար կարատելագործելու գործընթացի և արտադրանքի որակը:

Ընդհանուր գնահատում.

ՀՀ ԱՎԾ-ն նպաստում է տվյալների որակին, որպես ընդհանուր սկզբունք ողջ գրասենյակում և խրախուսում է բոլոր վիճակագիրներին կիրառել որակի միջոցառումներ իրենց ամենօրյա աշխատանքում: Որակի չափանիշների մեծ մասը նշված է “Պետական վիճակագրության մասին” օրենքի 5-րդ հոդվածում: 2011-2013թթ. ՀՀ ԱՎԾ-ն մշակել է որակի հռչակագրեր բոլոր իր 136 վիճակագրական արտադրանքների համար՝ ընդգրկելով որոշ որակի չափանիշներ և մեթատվյալներ: Դրանք առկա են ՀՀ ԱՎԾ-ի կայքում անգլերեն և նշում են ՀՀ ԱՎԾ-ի համար առաջին կարևոր քայլը վիճակագրական արտադրանքի որակի փաստաթղթավորման մեջ:

Սակայն, ընդհանուր որակի կառավարման համակարգ առկա չէ և, որպես հետևանք, սիստեմատիկ մշտադիտարկում և որակի կառավարում չի իրականացվում, չնայած այն պլանավորվում է ապագայի համար: Այսպիսով, որակի կառավարման իրականացումը և որակի ապահովումն եղել է աստիճանաբար և նեղ կենտրոնացված: Բոլոր վիճակագրական թեմային բաժինները ՀՀ ԱՎԾ-ի շրջանակում տվյալների ճշգրտությունը և յուրաժամանակությունը համարում են որակի չափանիշ, բայց Որակի կառավարման համակարգի (ՈԿՀ) առավել լայն կառուցվածքը հաճախ չի հասկացվում, դեռ ներդրված չէ և հետևաբար չի հետևավում անձնակազմի կողմից:

Առաջարկվում է, որ ՀՀ ԱՎԾ-ն ուսումնասիրի տարբեր որակի կառավարման համակարգեր, մշակի որակի կառավարման

համակարգ, հիմնվելով իր կարիքների և տեղական պայմանների վրա, և սկսի այս որակի կառավարման համակարգի իրականացումն որպես առաջնահերթ խնդիր: Այսպիսի համապարփակ և համընդգրկուն ՈԿՀ-ի իրականացման համար առաջարկվում է, որպեսզի ՀՀ ԱՎԾ-ն նշանակի որակի կառավարիչ (հնարավոր է բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնում), մշակի պլան ասոցացված որակի ապահովման շրջանակի նախագծման համար և իրականացնի ուսուցման ծրագիր որակի կառավարման գծով ողջ անձնակազմի համար գրասենյակում: Նման որակի կառավարման համակարգի և դրա հետ կապված որակի ապահովման շրջանակի իրականացումը կլինի երկարաժամկետ խնդիր ՀՀ ԱՎԾ-ի համար առաջիկա 4-5 տարիների ընթացքում:

Ցուցանիշ 4.1. Որակի քաղաքականությունը սահմանվում է և մատչելի է հանրության համար: Կազմակերպական կառուցվածքը և գործիքներն առկա են զբաղվելու որակի կառավարմամբ:

Առաքելությունը գտել է, որ ընդհանուր առմամբ որակի քաղաքականությունն առկա չէ, որպես այդպիսին, և ուստի, մատչելի չէ հանրությանը, չնայած նրան, որ ՀՀ ԱՎԾ-ն կատարել է մի շարք ջանքեր որակի կառավարման ոլորտում:

ՀՀ ԱՎԾ-ի անձնակազմը խիստ հանձնառու է որակին: Այս հանձնառությունը հիմնավորվում է վիճակագրական օրենքի 5-րդ հոդվածի ընդհանուր դրույթի միջոցով, որը նշում է որակի տարբեր չափանիշներ, ինչպես նաև “Հայաստանի Հանրապետության վիճակագրական աշխատանքների 2013-2015թթ. եռամյա ծրագրի” դրույթում, որը նշում է որակը որպես միջազգային համագործակցության համար առաջնահերթ ոլորտ: Այնուամենայնիվ, անձնակազմի ներկայիս ընկալումը որակի հանձնառության մասին սահմանափակված է և որակի հասկացությունը հիմնականում գնահատվում է տվյալների ճշգրտության, արժանահավատության, յուրաժամանակության բնութագրիչների համակցությամբ: Որակի չափանիշները, ընդհանուր առմամբ, գնահատվում են ընտրանքի սխալի չափման, աշխատանքի ներքին մշտադիտարկման համար կիրառվող ժամանակացույցների (թեև դրանցից ոչ բոլորն են հայտարարվում արտաքին սպառողների համար) և, ընդհանուր առմամբ, անձնակազմի և բաժինների ղեկավարների պրոֆեսիոնալ փորձի միջոցով:

Թեև վերջին ԹՎԻՆԻՆԳ ծրագիրը ներառում էր որակի բաղադրիչ և որոշակի առաջընթաց է ձեռք բերվել որակի հոշակագրերի հրապարակումների միջոցով (տես ստորև 4.2 և 4.4 ցուցանիշները), չկա այնպիսի որակի կառավարման համակարգի առավել լայն հասկացության տարածումը, խորը ընկալումը, ինչպիսիք են ԵՎՀ-ի Որակի Ապահովման Շրջանակը, TQM-ը կամ EFQM-ը, որոնք կհանգեցնեն անհրաժեշտությանը գնահատելու որակը պարամետրերի առավել լայն շրջանակով: Նման ընկալումը կարող է մասամբ փոխանցված է ՀՀ ԱՎԾ-ի ղեկավարությանը, բայց դեռ արմատավորված չէ ՀՀ ԱՎԾ-ի անձնակազմում:

ՀՀ ԱՎԾ-ն ընդունեց, որ անհրաժեշտ է ներդնել առավել լայն որակի հասկացություն ողջ գրասենյակում, ընդլայնել ողջ անձնակազմի ընդհանուր ընկալումը որակի բոլոր այն ասպեկտների վերաբերյալ, ինչպիսիք են տվյալների որակը, որակի վերաբերյալ հաշվետվությունները սպառողներին և արտադրողներին, արտադրանքի որակը, գործընթացի որակը, որակի չափումն ու գնահատումը: Այս հասկացությունը նաև կներառի այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք են անձնակազմի կառավարումը, ուսուցումը, կառավարման փոփոխությունը, բիզնես գործընթացի կողմնորոշումը և այլն: Որպես առաջնահերթ խնդիր, ՀՀ ԱՎԾ-ն հետևաբար պետք է մշակի ընդհանուր Որակի Կառավարման Համակարգ և որակի ապահովման շրջանակ առաջիկա 3-5 տարիների ընթացքում՝ կախված առկա ռեսուրսներից: Այս նպատակը գործառնական դարձնելու համար ՀՀ ԱՎԾ-ն պետք է ուսումնասիրի մի շարք հայտնի որակի շրջանակներ և դրանց իրականացումը գործնականում, որպեսզի սահմանի լավագույն և առավել հարմար մոդելն այն պայմանների համար, որոնցում ՀՀ ԱՎԾ-ն գործում է: Հաջորդ քայլը կլինի որակի ապահովման շրջանակի իրականացման համար պլանի մշակումը, ներառյալ անձնակազմի անհրաժեշտ ուսուցումը բոլոր մակարդակներում և որակի հանձնառությունը հանրային դարձնելը կայքի միջոցով: Դրա համար անհրաժեշտ նախապայման կլինի որակի կառավարչի նշանակումը ՀՀ ԱՎԾ-ի համար և ստորաբաժանման/կառուցվածքի (բաժնի կամ աշխատանքային խմբի) ստեղծումը/հետագա զարգացումը ստանձնելու ընդհանուր պատասխանատվությունը որակի կառավարման զարգացման և իրականացման համար:

Եթե ՀՀ ԱՎԾ-ն մտադիր է շարունակել Եվրոպական չափանիշների իրականացումն ընտրված վիճակագրական բնագավառերում, ապա որակի հաշվետվությունների արտադրումը պետք է նախատեսված լինի, որ ուղղեկցվի Եվրոպական ստանդարտներին համապատասխան տվյալների արտադրմամբ: Որակի կառավարման շրջանակի ներդրումը կաջակցի այս որակի հաշվետվությունների արտադրմանը և կտրամադրի դրանք կազմելու միջոցներ:

Ցուցանիշ 4.2. Առկա են ընթացակարգեր վիճակագրական արտադրման գործընթացի որակի պլանավորման և մշտադիտարկման համար:

Որակի հոչակագրերը 136 արտադրանքների համար մշակվել են 2002թ. Եվրոպական որակի հոչակագրի հիման վրա: Այս որակի հոչակագրերն ուղղված են սպառողներին և նշում են առաջին քայլը շրջանակելու և գնահատելու որակը տվյալների արտադրման բոլոր փուլերում: Սակայն, դեռ առկա չեն պատշաճ նախագծված և փաստաթղթավորված ընթացակարգերը վիճակագրական արտադրման գործընթացի որակի մշտադիտարկման համար: Դրանք անհրաժեշտ կլինի մշակել, ընդհանուր առմամբ, որակի կառավարման համակարգի գծով աշխատանքի շրջանակում:

Ցուցանիշ 4.3. Արտադրանքի որակը պարբերաբար մշտադիտարկվում է և գնահատվում կապված հնարավոր փոխզիջումների հետ և հաղորդվում համաձայն Եվրոպական վիճակագրության որակի չափանիշների:

Ներկայումս առկա է որակի աշխատանքային խումբ, որում ընդգրկված են մի շարք աշխատակիցներ ՀՀ ԱՎԾ-ի այլ բաժիններից, բայց լինելով առավել խորհրդատվական և համակարգող մարմին այն չունի, ընդհանուր առմամբ, Որակի Կառավարման Համակարգի զարգացման համար իրավասություն և պատասխանատու չէ գործընթացների և ուղեցույցների ստեղծման համար մշտադիտարկելու արտադրանքի որակը: Արտադրանքի որակն ամբողջությամբ գտնվում է արտադրանքն արտադրող անձի, նրա բաժնի ղեկավարի և վերջապես ՀՀ ԱՎԾ-ի ղեկավարության ձեռքերում: Որոշ կենտրոնացված ուղեցույցներ, թե ինչպես արտադրել 136

որակի հոչակագրերը գոյություն ունեն և ժամանակ առ ժամանակ արդիականացվում են և ներկայումս համալրվում նորերով, օրինակ՝ տրանսպորտի, մարդահամարի վերաբերյալ և այլն:

Որակի կառավարչի նշանակումը և որակի կառավարման առավել կենտրոնացված մոտեցումը հնարավոր կդարձնի սիստեմատիկ մոտեցման մշակումը մշտադիտարկելու և գնահատելու արտադրանքի որակը համաձայն համապատասխան որակի չափանիշների:

Ցուցանիշ 4.4. Իրականացվում է հիմնական վիճակագրական արտադրանքների կանոնավոր և մանրակրկիտ վերանայում, օգտագործելով արտաքին փորձագետների, որտեղ հնարավոր է:

136 որակի հոչակագրերը կարող են դիտարկվել որպես հիմնական վիճակագրական արտադրանքների կանոնավոր վերանայում և փոփոխությունների դեպքում դրանք նույնպես արդիականացվում են: Սակայն, որակի հոչակագրերը, ինչպես որ ներկայումս գոյություն ունեն, առավել սպառողներին ուղղված որակի հաշվետվություններ են, որոնք պարունակում են տեղեկատվության սահմանափակ շարք: Հիմնական վիճակագրական արտադրանքների մանրակրկիտ, խորը վերանայումները կարող են իրականացվել որոշ վիճակագրական բաժինների կողմից, սակայն, դա արվում է ոչ կենտրոնացված ուղեցույցով կամ կանոնավոր կերպով և դրանք չեն հրապարակվում: Որակի գնահատումները կամ որակի աուդիտները դեռ չեն իրականացվում և առկա չէ ընդհանուր հարցաթերթ, որն ընդգրկում է վիճակագրական արտադրման բոլոր փուլերի որակի գնահատումը: Արտաքին փորձագետները ներգրավված են մակրոտնտեսական տվյալների ԱՄՀ-ի վերանայումներում և Թվինինգ ծրագրերի շրջանակում փորձագետները կարող են նույնպես վերանայել վիճակագրության որոշ բնագավառներ, բայց դրանք չեն կարող համարվել որակի գնահատումներ Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի իմաստով: Ապագա որակի կառավարիչը պետք է մշակի բոլոր հիմնական վիճակագրական արտադրանքների կանոնավոր և համապարփակ որակի վերանայումների ծրագիր (օրինակ՝ որակի գնահատումներ, որակի աուդիտներ), հիմնվելով գնահատման ստուգման ցանկի վրա, որը կիրառելի է բոլոր արտադրանքների համար:

Սկզբունք 5. Վիճակագրական գաղտնիություն

Պետք է բացարձակապես երաշխավորված լինի տվյալներ տրամադրողների (տնային տնտեսություններ, ձեռնարկություններ, կառավարման մարմիններ և այլ ռեսպոնդենտներ) մենությունը և իրենց կողմից տրամադրած տեղեկատվության գաղտնիությունը ու դրա միայն վիճակագրական նպատակներով օգտագործումը:

Ընդհանուր գնահատում.

Վիճակագրական գաղտնիությունը խստորեն պահպանվում է ՀՀ ԱՎԾ-ի կողմից: Իրավականորեն դա ապահովվում է “Պետական վիճակագրության մասին” օրենքի 14-րդ հոդվածով, որը համալրվում է “Վիճակագրության գաղտնիության պաշտպանության մասին” կարգով՝ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի թիվ 53 որոշում: Երևում է, որ կա վիճակագրական գաղտնիության բովանդակության և կարևորության լավ հասկացողություն ՀՀ ԱՎԾ-ի անձնակազմի և սպառողների շրջանում և չկան վիճակագրական գաղտնիության խախտումների օրինակներ: Տվյալների անվտանգության համար հոգ փանելը և SS-ի ռեսուրսների բացակայությունը մեծագույն մարտահրավեր է, որը նշվել է նաև 3-րդ սկզբունքի ներքո:

Ցուցանիշ 5.1. Վիճակագրական գաղտնիությունն երաշխավորված է օրենքով:

Հայաստանի Հանրապետության “Պետական վիճակագրության մասին” օրենքի 2-րդ գլխի 14-րդ հոդվածը հաստատում է, որ առկա է իրավական դրույթ վիճակագրական գաղտնիության համար: Այս հոդվածը ներառում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են գաղտնի տվյալների սահմանումը և տվյալների տարածման համար ընթացակարգերը մենաշնորհային գործունեությունների գծով, որը սահմանվում է, որպես գաղտնի, բայց այդ տեղեկատվության ոչ տարածումը էապես կարող ազդել վիճակագրական տեղեկատվության ամբողջականության վրա: Նման դեպքերում տարածելու վերաբերյալ որոշումը պետք է ընդունվի Խորհրդի կողմից:

Տուցանիշ 5.2. Անձնակազմը ստորագրում է պաշտոնում նշանակվելու իրավական գաղտնիության պարտավորություններ:

ՀՀ ԱՎԾ-ի անձնակազմը, ինչպես նաև պայմանագրային անձնակազմը ստորագրում են գաղտնիության պարտավորություններ, երբ նշանակվում են: Այս պարտավորություններն արդիականացվել են 2007 թ.:

Տուցանիշ 5.3. Տույժեր են նախատեսված վիճակագրական գաղտնիության ցանկացած դիտավորյալ խախտումների համար:

Վիճակագրական գաղտնիության խախտման համար տույժերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Ծառայության մասին օրենքի 23-րդ հոդվածով: Վիճակագրական գաղտնիության խախտում երբևէ չի գրանցվել:

Տուցանիշ 5.4. Ուղեցույցները և հրահանգները տրամադրվում են անձնակազմին վիճակագրական գաղտնիության պաշտպանության համար արտադրման և տարածման գործընթացներում: Գաղտնիության քաղաքականությունը հայտնի է դարձված հանրությանը:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի թիվ 53 որոշումը «Վիճակագրական գաղտնիության պաշտպանության մասին» կարգ է և ներառում է վիճակագրական գաղտնիության իրականացումը՝ նշված «Պետական վիճակագրության մասին» օրենքում: Այս կարգը հասանելի է ՀՀ ԱՎԾ-ի կայքում, սակայն, դյուրամատչելի չէ սպառողներին: «Վիճակագրական գաղտնիության հարցերով հանձնաժողովը (աշխատանքային խումբը)»՝ ստեղծված ՀՀ ԱՎԾ-ի նախագահի կողմից պատասխանատու է բոլոր գործընթացների և ընթացակարգերի պարբերաբար արդիականացման և գնահատման համար կապված վիճակագրական գաղտնիության հետ:

Վիճակագրական գաղտնիության անհրաժեշտության համար կա լավ հասկացողություն սպառողների շրջանում: Սա կարող է աջակցվել սպառողին ուղղված վիճակագրական գաղտնիության բացատրության հրապարակումով կայքում: ՀՀ ԱՎԾ-ն կարգավորում է սպառողների կողմից միկրո-տվյալներ ձեռք բերելու հարցումները, ապահովելով վիճակագրական

գաղտնիությունը և այս նպատակով սահմանել է համապատասխան տեխնիկաներ: Հետազոտողները ստանում են անվանագերծված տվյալների ֆայլեր: Այլ սպառողները, ինչպիսիք են միջազգային կազակերպությունները, խնդրում են հատուկ հաշվարկներ, օգտագործելով անհատական տվյալներ, բայց ոչ ոք չի ստանում չանվանագերծված միկրո-տվյալներ: Չկա այս սկզբունքի խախտման ոչ մի օրինակ:

Ցուցանիշ 5.5. Ֆիզիկական, տեխնոլոգիական և կազմակերպչական դրույթներն առկա են պաշտպանելու վիճակագրական տվյալների բազաների անվտանգությունն ու ամբողջականությունը:

Տվյալների անվտանգության համար ընթացակարգերը լավ սահմանված են ՀՀ ԱՎԾ-ում և հատուկ անձնակազմ է հատկացված տվյալների անվտանգությունն ապահովող մի շարք կարևոր խնդիրների համար: Ցանցային ադմինիստրատորը կրում է պատասխանատվություն ցանցի տվյալների անվտանգության ապահովման և ցանցային ռեսուրսների և գաղտնաբառերի օգտագործման մշտադիտարկման համար: Ցանցային ադմինիստրատորը նաև պատասխանատու է ցանցի արդիականացման և ցանցի անխափան շահագործման ապահովման և անվտանգության առանձնահատկությունների համար: Տվյալների բազայի ադմինիստրատորը ունի պարտավորություն զարգացնելու և պահպանելու տվյալների բազաները ու ապահովելու տվյալների անվտանգությունը: Տվյալների բազայի ադմինիստրատորը նաև պատասխանատու է սպառողի գրանցման, ներքին տվյալների բազայի և կրկնօրինակների համար: Ցանցային ադմինիստրատորի և տվյալների բազայի ադմինիստրատորի պարտավորությունները նկարագրված են ներքին ուղեցույցներում: ՀՀ ԱՎԾ-ն ունի հակիրճ ներքին հրահանգներ գաղտնաբառերի պահպանման և օգտագործման համար, ինչպես նաև ներքին հրահանգներ կրկնօրինակների ստեղծման և պահպանման համար:

Հիմնական մարտահրավերը տվյալների անվտանգության համար ռեսուրսների բացակայությունն է: ՏՏ-ի սարքավորումները մասամբ ցածր որակի են: Կան մի շարք հնացած համակարգիչներ և, ինչպես նշված է սկզբունք 3-ի ներքո, սա նշանակում է, որ ծրագրային ապահովումը պետք է պահպանվի և մշակվի երկու տարբեր տարբերակներով: Ստանդարտ ծրագրային ապահովման

հին տարբերակները կարող են հանգեցնել անվտանգության արդիականացումների բացակայության: Կա նաև տվյալների կորստի զգալի ռիսկ, այդ թվում, տվյալների կրկնօրինակների:

Ցուցանիշ 5.6. Խիստ արձանագրություններ են կիրառվում արտաքին սպառողների հանդեպ հետազոտական նպատակներով վիճակագրական միկրո տվյալներին մուտք գործելու համար:

Հետազոտողները չունեն մուտք նույնականացվող միկրո տվյալներին և ՀՀ ԱՎԾ-ն չունի ապահով կենտրոն կամ հեռակա կարգով մուտք միկրո տվյալներին: ՀՀ ԱՎԾ-ն տրամադրում է հետազոտողներին չնույնականացվող միկրո տվյալներ տարածման մի շարք տվյալների բազաների միջոցով և հարցման հիման վրա: Այն, ընդհանրապես, նաև կատարում է մասնագիտական հատուկ հաշվարկներ սպառողների համար: Վիճակագրական գաղտնիությունը խստորեն պահպանվում է ՀՀ ԱՎԾ-ի կողմից: Սպառողները մուտք են ստանում այս տվյալներին, ուղարկելով գրավոր հարցում ՀՀ ԱՎԾ-ին և այս հարցումը հաստատվում է Վիճակագրության պետական խորհրդի կողմից: Սպառողները ունել լավ հասկացողություն ՀՀ ԱՎԾ-ի սահմանափակումների մասին և երևում է, որ բավարարված են թե գործընթացից, և թե ստացված ծառայությունից: ՀՀ ԱՎԾ-ն չի հրապարակել հեշտությամբ մատչելի և սպառողին ուղղված ուղեցույցներ հատուկ վիճակագրության համար մուտք ստանալու ընթացակարգերի վերաբերյալ:

Սկզբունք 6. Անկողմնակալություն և օբյեկտիվություն

Վիճակագրական մարմինները հարգում են գիտական անկախությունը, միաժամանակ մշակելով, արտադրելով և տարածելով Եվրոպական վիճակագրությունն օբյեկտիվ, պրոֆեսիոնալ և թափանցիկ ձևով, հավասարապես վերաբերվելով բոլոր սպառողներին:

Ընդհանուր գնահատում.

Դիտարկումները՝ հրականացված փորձագիտական գնահատման ընթացքում խիստ ապացույց են, որ ՀՀ ԱՎԾ-ն հարգում է

գիտական անկախությունը պետական վիճակագրության արտադրման և տարածման մեջ և իրականացնում է իր աշխատանքները օբյեկտիվ, պրոֆեսիոնալ և թափանցիկ ձևով: Ծառայության ոչ անկողմնակալությունը, ոչ օբյեկտիվությունը հարցականի տակ չեն դրվել փորձագիտական գնահատման որևէ փուլում, ավելին, դրանք հաստատվել են հարցված շահառուների բոլոր խմբերի կողմից: Փորձն ապահովելու նոր հրապարակած տվյալների հավասար հասանելիությունը պետք է ընդգծվի, որպես օրինակելի: Ներքին համաձայնեցված և կիրառվող ընթացակարգերի փաստաթղթավորումը և հրապարակումը կայքում կլինի միջոց առավել բարելավվելու բնակչության ընկալումը, որ ՀՀ ԱՎԾ-ն անկողմնակալ և օբյեկտիվ հաստատություն է:

Ցուցանիշ 6.1. Վիճակագրությունը կազմվում է օբյեկտիվ հիմքի վրա՝ սահմանված վիճակագրական նկատառումներով:

“Պետական վիճակագրության մասին” օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է վիճակագրական տեղեկատվության օբյեկտիվությունը, չեզոքությունը և ամբողջականությունը, որպես պետական վիճակագրության պահանջներ: Օրենքով, սահմանելով Վիճակագրության Պետական Խորհրդը որպես ՀՀ ԱՎԾ-ի կառավարման բարձրագույն մարմին, վիճակագրության գիտական անկախությունը ունի շատ ուժեղ իրավական հիմք Հայաստանում: Փորձագիտական գնահատման ընթացքում հարցված շահառուները, այդ թվում լրատվամիջոցների ներկայացուցիչները զգացվում էր, որ համոզված էին, որ ՀՀ ԱՎԾ-ն կազմում է վիճակագրությունն օբյեկտիվ հիմքով՝ սահմանված միայն վիճակագրական նկատառումներով:

Ցուցանիշ 6.2. Աղբյուրների և վիճակագրական մեթոդների ընտրությունները, ինչպես նաև վիճակագրության տարածման մասին որոշումները տեղեկացվում են վիճակագրական նկատառումներով:

Վիճակագրության Պետական Խորհրդի վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերն ընդունելու իրավական իրավունքով ռեսուրսների և վիճակագրական մեթոդների ընտրությունը, ինչպես նաև վիճակագրության տարածման մասին

որոշումները վիճակագիրների ձեռքբերում են: ՀՀ ԱՎԾ-ն խստորեն կիրառում է միջազգային վիճակագրական մեթոդները և ստանդարտներն արտադրված վիճակագրական տվյալների օբեկտիվությունը և միջազգային համադրելիությունը երաշխավորելու համար: Հարցված շահառուները հաստատեցին ՀՀ ԱՎԾ-ի անձնակազմի պրոֆեսիոնալիզմը:

Ցուցանիշ 6.3. Հրապարակված վիճակագրությունում հայտնաբերված սխալներն ուղղվում են հնարավորինս սեղմ ժամկետներում և հրապարակվում:

Եթե սխալները հայտնաբերվում են արդեն հրապարակված վիճակագրությունում, դրանք անմիջապես պետք է ուղղել և սպառողներին պետք է տեղյակ պահել: Փաստաթուղթը, որը նկարագրում է ընթացակարգը և կարող է օգտագործվել անձնակազմի կողմից դեռ գոյություն չունի և պետք է պատրաստվի և հրապարակվի շուտով: Փաստաթուղթը պետք է բացատրի, թե ինչպես գործել տպագրված հրապարակումներում, առցանց տվյալների բազաներում և մամուլի հաղորդագրություններում սխալների դեպքում:

Անձնակազմը տեղեկացվում է, որ կտուգանվի, եթե առաջացնի նման սխալներ: Սա փորձագետների կարծիքով չի նպաստում մշակույթի ստեղծմանը գրասենյակում, որտեղ կարող են լինել սխալներ և ընդունվել:

Ցուցանիշ 6.4. Տեղեկատվությունն օգտագործվող մեթոդների և ընթացակարգերի վերաբերյալ հրապարակայնորեն մատչելի է:

ՀՀ ԱՎԾ-ի կայքը ներառում է փաստաթղթեր բոլոր վիճակագրական արտադրանքների համար: Այսպես կոչված “որակի հռչակագրերը” նկարագրում են վիճակագրության օրենսդրական հիմքը և պատճառը, թե ինչու է վիճակագրությունն արտադրվում, բացատրում են օգտագործվող մեթոդաբանությունը, տրամադրում են տեղեկատվություն տվյալների որակի վերաբերյալ և թե ինչպես տվյալները պետք է մեկնաբանվեն և ապահովվում են սպառողների համար այլ կարևոր տեղեկատվություն: Համապատասխան տեղեկատվությունը կարելի է նաև գտնել ՀՀ ԱՎԾ-ի բոլոր տպագիր հրապարակումներում:

Որպես ԱՄՀ-ի Տվյալների Տարածման Հատուկ Ստանդարտի (SSՀՍ) բաժանորդ, ՀՀ ԱՎԾ-ն պարբերաբար տրամադրում է մեթատվյալներ SSՀՍ-ի ցուցանիշների վերաբերյալ ԱՄՀ-ին:

Ցուցանիշ 6.5. Վիճակագրական թողարկման ամսաթվերը և ժամերը նախապես հայտարարվում են:

ՀՀ ԱՎԾ-ն նախապես հրապարակում է տարեկան թողարկման օրացույցը, որը, սակայն, դեռ ամբողջական չէ: Այն պարունակում է SSՀՍ-ի տվյալներ, մինչ՝ հրապարակումների ամսաթվերը ներառված են վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրում: Առաջարկվում է նախապես հրապարակել առանձին համապարփակ տարեկան թողարկման օրացույց կայքում և ներառել պարտավորություն հրապարակելու թողարկման օրացույց վերանայված “Պետական վիճակագրության մասին” օրենքում:

Թողարկման օրացույցի համար նախօրոք հայտարարված հրապարակման ամսաթվի ցանկացած փոփոխություն պետք է հրապարակվի և բացատրվի նախապես հնարավորինս շուտ հանուն թափանցիկության: Տարածման քաղաքականության կամ առանձին փաստաթղթի մեջ պետք է հստակորեն բացատրվի, թե որ հանգամանքներում նախապես հայտարարված ամսաթիվը կարող է փոխվել և ինչպես վերանայված ամսաթիվը կրապարակվի: Կանոնները պետք է հրապարակվեն: ՀՀ ԱՎԾ-ի ղեկավարությունը նշեց, որ նման փոփոխություններ երբեք չեն տեղի ունեցել:

Ցուցանիշ 6.6. Նախապես ծանուցում է տրվում հիմնական վերանայումների կամ մեթոդաբանություններում փոփոխությունների վերաբերյալ:

ՀՀ ԱՎԾ-ն հրապարակում է վերանայման քաղաքականություն ազգային հաշիվների համար իր կայքում: Համապարփակ վերանայման քաղաքականություն պետք է մշակվի և հրապարակվի տարածման քաղաքականությունում կամ առանձին փաստաթղթում: Այն պետք է պարունակի ընթացակարգեր, որոնք օգտագործվում են ողջ վիճակագրության համար նախնական և վերջնական արդյունքների հրապարակումների հետ մեկտեղ և այն պետք է պարունակի ընթացակարգեր, որոնք օգտագործվում են

դասակարգիչներում և մեթոդաբանությունում փոփոխությունների դեպքում:

Ցուցանիշ 6.7. Բոլոր սպառողները պետք է ունենան հավասար մուտք վիճակագրական թողարկումներին միևնույն ժամանակ: Ցանկացած արտոնյալ նախապես թողարկման մուտք ցանկացած արտաքին սպառողի համար սահմանափակվում, վերահսկվում և հրապարակվում է: Այն դեպքում, երբ տեղեկատվության արտահոսք է առաջանում, նախապես թողարկման կարգավորումները վերանայվում են, որպեսզի ապահովվի անկողմնակալությունը:

ՀՀ ԱՎԾ-ի ղեկավարությունը տեղեկացրել է փորձագիտական գնահատման թիմի անդամներին, որ գործնականում բոլոր սպառողներն ունեն հավասար մուտք վիճակագրական թողարկումներին, ինչպես սահմանված է պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրում: Մինչ այժմ արտահոսք երբեք տեղի չի ունեցել: Առաջարկվում է նկարագրել մեխանիզմները, որոնք օգտագործվում են ապահովելու հավասար մուտք, ինչպես նաև արտահոսքը կանխելու համար միջոցառումները տարածման քաղաքականությունում կամ առանձին փաստաթղթում, որը պետք է հրապարակվի կայքում:

Ցուցանիշ 6.8. Վիճակագրական թողարկումները և մամուլի ասուլիսներում արված հայտարարություններն օբյեկտիվ են և անկուսակցական:

Անկողմնակալությունը և օբյեկտիվությունը հիմնական սկզբունքներ են, որոնք սահմանում են ՀՀ ԱՎԾ-ի կողմից պետական վիճակագրության արտադրումը և տարածումը: Երևում է, որ գրասենյակում մամուլի ասուլիսների համար մամուլի հաղորդագրությունների և հայտարարությունների պատրաստման և հաստատման ու դրանց բովանդակության մեջ օբյեկտիվության ապահովման համար ընթացակարգերը նկարագրված են ներքին փաստաթղթերում: Դրանք պետք է հրապարակվեն ՀՀ ԱՎԾ-ի կայքում, եթե հնարավոր է նաև անգլերեն:

Սկզբունք 15. Մատչելիություն և պարզություն

Եվրապական վիճակագրությունը ներկայացված է հստակ և հասկանալի տեսքով, թողարկված համապատասխան և հարմար ձևով, հասանելի և մատչելի անկողմնակալ հիմունքներով աջակցող մեթատվյաների և ուղղորդման հետ:

Ընդհանուր գնահատում.

«ԱՎԾ-ն տարածում է ողջ վիճակագրությունն իր կայքում և դրանց մեծ մասը նաև հրապարակվում է թղթային ձևով: Որոշ վիճակագրություն նաև մատչելի է անգլերեն և ռուսերեն: Մեթատվյալը ներկայացված են վիճակագրության հետ մեկտեղ ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային ձևով, բայց կարելի է օգտվել որոշ բարելավումից: «ԱՎԾ-ի կողմից տարածվող ողջ վիճակագրությունը, ներառյալ թղթային հրապարակումները, անվճար են և հասանելի բոլորի համար:

Ցուցանիշ 15.1. Վիճակագրությունը և համապատասխան մեթատվյալները ներկայացվում են և արխիվացվում այնպիսի ձևով, որը հեշտացնում է պատշաճ մեկնաբանումը և իմաստալից համադրումները:

«ԱՎԾ-ի կայքը համակարգված է և հեշտ հասանելի: «Վիճակագրության Պետական Խորհրդի 2001թ. օգոստոսի 15-ի թիվ 60 որոշումը՝ կարգ է վիճակագրական տեղեկատվության հրապարակման ձևերի մասին: Այս կարգը հիմնված է «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ գլխի 14-րդ հոդվածի վրա և կանոնակարգում է հրապարակումների տեսակները և տարածման ձևերը: ՀՀ ԱՎԾ-ի տարածման քաղաքականության վերաբերյալ համապարփակ փաստաթուղթը բացակայում է:

Մեթատվյալները համաձայն ՏՏՀՍ-ի և որակի հոչակագրերը՝ մշակված և արդիականացված յուրաքանչյուր վիճակագրական արտադրանքի համար, հրապարակված են կայքում: Թղթային հրապարակումները ներառում են գլուխ մեթատվյալների վերաբերյալ:

Ցուցանիշ 15.2. Տարածման ծառայություններն օգտագործում են ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցման

տեխնոլոգիաներ, անհրաժեշտության դեպքում ավանդական թղթային օրինակ:

ՀՀ ԱՎԾ-ն տարածում է տվյալներ որոշ տարածման տվյալների բազաների, PDF հաշվետվությունների և այլ վիճակագրական թողարկումների միջոցով: ArmStatBank-ը (PC Axis-ի հիման վրա) և ArmDevInfo-ն (Devinfo-ի հիման վրա) ամենախոշոր տարածման տվյալների բազաներն են: Առկա են նաև տվյալների բազաներ անվանագերծված տվյալներով տարբեր հետազոտություններից, դրանցից շատերը բաց են բոլոր սպառողների համար: Սպառողները, մեծամասամբ, բավարարված են ՀՀ ԱՎԾ-ի կայքով, սա հատկապես վերաբերում է փորձագետ սպառողներին: Որոշ սպառողներ՝ հարցված փորձագիտական գնահատման ժամանակ քննադատեցին տվյալների բազաների քանակը, ինչն ավելի է դժվարացնում սպառողների կողմից փնտրվող տվյալները գտնելը: Հետևաբար, պետք է մշակել ընդհանուր տվյալների բազա:

ՀՀ ԱՎԾ-ն հրապարակում է մեծ քանակությամբ թղթային հրապարակումներ: “Վիճակագրական հրապարակումների համացանկը” հրապարակվում է տարվա սկզբին և այդ հրապարակումների տարածումն ուղղեկցվում է մամուլի հաղորդագրություններով և մամուլի ասուլիսներով: Թեև սպառողները և հատկապես փորձագետ սպառողները, գնալով ավելի են օգտագործում կայքը, թղթային հրապարակումները դեռ պահանջված են՝ պայմանավորված անկայուն ինտերնետ կապով և սովորույթներով: Կարելի է կանխատեսել, որ թղթային հրապարակումների անհրաժեշտությունը կնվազի ապագայում: ՀՀ ԱՎԾ-ն անցկացրել է ուսուցում սպառողների խմբերի համար տվյալների բազաների օգտագործման վերաբերյալ և պետք է շարունակի դա անել: Այս տեսակի ուսուցումը կարող է նաև օգտակար լինել միասնական տարածման տվյալների բազայի մշակման գործընթացում:

ՀՀ ԱՎԾ-ն ունի հեռախոսակապի կենտրոն, որը գտնվում է վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնում, որը բաց է ժամը 9-ից-18-ը: Չկա քաղաքականություն կամ ուղեցույց, թե ինչպես պետք է զբաղվել սպառողների հարցերով: Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ

կապերի բաժնի անձնակազմը պատասխանում է ընդհանուր հարցերին, իսկ հատուկ հարցերն ուղղում համապատասխան թեմային բաժիններին:

Ցուցանիշ 15.3. Պատվերով նախագծված ուսումնասիրությունները տրամադրվում են, երբ հնարավոր է, և հանրությունը տեղեկացվում է:

ՀՀ ԱՎԾ-ն հետևում է ուղեցույցներին կապված տվյալների հարցումների հետ և վերաբերվում բոլոր սպառողներին հավասարապես: Չնայած այն տպավորության, որ առավել փորձառու սպառողներին հայտնի են ընթացակարգերը պատվերով նախագծված ուսումնասիրությունների հարցման համար, այդ ընթացակարգերը կայքում հեշտությամբ չեն գտնվում: Պատվերով նախագծված ուսումնասիրությունները կատարվում են սպառողների համար ՀՀ ԱՎԾ-ի նախագահին ուղղված գրավոր խնդրանքով և որոշվում են Վիճակագրության Պետական Խորհրդի կողմից: Սպառողներից շատերն այն կարծիքին էին, որ նրանք ստանում են իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը և հասկանում են անհատական տվյալների տարածման առումով ՀՀ ԱՎԾ-ի վրա դրված սահմանափակումները:

Ողջ վիճակագրությունը հասանելի է անվճար, ներառյալ պատվերով նախագծված ուսումնասիրությունները: Սպառողներն ընդհանուր առմամբ բավարարված են ՀՀ ԱՎԾ-ի աշխատանքով: Պատվերով նախագծված ուսումնասիրություններից շատերը չեն հրապարակվում կայքում ՀՀ ԱՎԾ-ի կողմից:

Ցուցանիշ 15.4. Մուտքը միկրոտվյալներին թույլատրվում է հետազոտական նպատակներով և ենթարկա է հատուկ կանոնների և արձանագրությունների:

Հետազոտողներին վերաբերվում են ոչ շատ տարբեր, քան որևէ այլ սպառողին և նրանք չեն ստանում նույնականացվող միկրո տվյալներ: ՀՀ ԱՎԾ-ն չունի ապահով կենտրոն, որտեղ հետազոտողները կարող են աշխատել միկրո տվյալների հետ և հնարավոր չէ հեռակա կարգով մուտք գործել միկրո տվյալներին: Հետազոտողներին մատչելի տվյալները դրանք տվյալների

բազանների միջոցով մատչելի տվյալներն են և հետազոտողի կողմից հարցվող անվանագերծված տվյալները:

Ցուցանիշ 15.5. Մեթատվյալները փաստաթղթավորվում են համաձայն ստանդարտացված մեթատվյալների համակարգերի:

Մեթատվյալները տարածվում են վիճակագրության հետ մեկտեղ ինչպես հատուկ գլխում թղթային հրապարակումներում, այնպես էլ կայքում, որտեղ մեթատվյալները հասանելի են մեթոդաբանության բաժնում: ՀՀ ԱՎԾ-ն բաժանորդագրված է ՏՏՀՍ-ին և ունի հղում ԱՄՀ-ի ՏՏՀՍ-ի կայքի Հայաստանի էջին: ՀՀ ԱՎԾ-ն լրացուցիչ մշակել է որակի հոչակագրեր 136 վիճակագրական արտադրանքների համար: Այս որակի հոչակագրերը անհրաժեշտության դեպքում արդիականացվում են թեմային բաժինների կողմից և նախաձեռնվում համապատասխան բաժնի ղեկավարի կողմից:

ՀՀ ԱՎԾ-ն չունի մեթատվյալների համակարգ, որը ներառում է ստանդարտացված մեթատվյալներ ՀՀ ԱՎԾ կողմից տարածվող ողջ վիճակագրության վերաբերյալ: Մեթատվյալները պետք է բարելավվեն երեք քայլերով. առաջինը, վերակազմավորելով ՏՏՀՍ-ի և որակի հոչակագրերի տարծման ձևը կայքում՝ դարձնելու ավելի հեշտ սպառողների համար դրանք գտնելը, երկրորդը, սահմանելով մեթատվյալների ստանդարտ, որը ծառայելու է ՀՀ ԱՎԾ-ի կարիքներին և պայմաններին ու սպառողներին, և երրորդը, իրականացնելով այս մեթատվյալների ստանդարտը:

Ցուցանիշ 15.6. Սպառողները տեղեկացվում են վիճակագրական գործընթացների մեթոդաբանության մասին, ներառյալ վարչական տվյալների օգտագործումը:

Սպառողները, ընդհանուր առմամբ, տեղեկացվում են հետազոտությունների և հաշվառումների մեթոդաբանության մասին որակի հոչակագրերի միջոցով, որոնք առկա են ՀՀ ԱՎԾ-ի կայքում: Սպառողների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ նրանք, ընդհանուր առմամբ, ունեն լավ հասկացողություն վիճակագրության որակի և նախնական տվյալների մշակման հետ կապված մարտահրավերների մասին և, երևում է, որ առկա է լավ, հիմնականում երկկողմանի կապ փորձագետ սպառողների և ՀՀ ԱՎԾ-ի միջև: Սպառողները, կարծես, տեղեկացված չեն

վարչական տվյալների վրա հիմնված վիճակագրության արտադրման մեթոդաբանության կամ ներգրավված գործընթացների մասին, երբ ՀՀ ԱՎԾ-ն տարածում է այլ պետական մարմինների կողմից արտադրված վիճակագրություն:

Ցուցանիշ 15.7. Սպառողները տեղեկացվում են վիճակագրական արտադրանքների որակի մասին կապված Եվրոպական վիճակագրության համար որակի չափանիշների հետ:

Սպառողները չեն տեղեկացվում որակի մասին համապարփակ և սիստեմատիկ ձևով: Մեթատվյալները ՀՀ ԱՎԾ-ի կողմից հրապարակվում են որակի հռչակագրերի ձևով բոլոր վիճակագրական արտադրանքների համար և ՏՏՀՍ-ով: Սա դեռ չի հետևում Եվրոպական վիճակագրության համար որակի չափանիշներին և սպառողները, հետևաբար, չեն տեղեկացվում այդ մասին:

1.7. Ազգային վիճակարագական ինստիտուտի համակարգման դերը

Հայաստանում ազգային վիճակագրական համակարգի համակարգման գնահատումը նախ պահանջում է պատասխան այն հարցին, թե ինչպես է ազգային վիճակագրական համակարգը սահմանվում և սահմանազատվում:

“Պետական վիճակագրության մասին” օրենքը չի տալիս հստակ պատասխան այս հարցին: Այն չի խոսում Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի մասին: Միջազգայնորեն օգտագործվող սահմանումը կարելի է գտնել ՏՀԶԿ-ի (OECD) վիճակագրական տերմինների բառարանում՝ «Ազգային վիճակագրական համակարգը՝ երկրում վիճակագրական կազմակերպությունների և միավորների համույթ է, որը համատեղ հավաքագրում, մշակում և տարածում է պաշտոնական վիճակագրություն ազգային կառավարության անունից»: Խնդիրը այն է, որ “պաշտոնական վիճակագրություն” տերմինը նույնպես չի օգտագործվում “Պետական վիճակագրության մասին” օրենքում: Օրենքը խոսում է “պետական վիճակագրության” մասին, որը արտադրվում է ազգային վիճակագրական ծառայության կողմից (<< ԱՎԾ) և այն խոսում է վարչական վիճակագրության մասին, որը արտադրվում է այլ պետական մարմինների կողմից:

<< ԱՎԾ-ի ղեկավարության, վարչական վիճակագրություն արտադրողների և սպառողների տարբեր խմբերի հետ քննարկումների արդյունքում, պարզվեց, որ “պետական վիճակագրություն” տերմինն օգտագործվում է որպես հոմանիշ “պաշտոնական վիճակագրության” համար և պետական վիճակագրությունը միայն արտադրվում է << ԱՎԾ-ի կողմից: Դա նշանակում է, որ Հայաստանյան վիճակագրական համակարգը խիստ կենտրոնացված համակարգ է և դա նշանակում է, որ միայն << ԱՎԾ-ն պետք է հետևի “Պետական վիճակագրության մասին” օրենքի խիստ կանոններին, իսկ վարչական վիճակագրության արտադրողները՝ ոչ:

Ինչ վերաբերում է վիճակագրության համակարգմանը Հայաստանում, “Պետական վիճակագրության մասին” օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է, որ << ԱՎԾ-ն իրկանացնում է

պետական վիճակագրական աշխատանք և համակարգում այն Հաստատանի Հանրապետության տարածքում: Ավելին, Վիճակագրության Պետական Խորհուրդն ունի վարչական վիճակագրության համակարգման առաքելություն, որը սահմանված է վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերում:

Հիմնական համակարգման մեխանիզմները պետական վիճակագրական աշխատանքների եռամյա և տարեկան ծրագրերն են: ՀՀ ԱՎԾ-ն համաձայն “Պետական վիճակագրության մասին” օրենքի հաստատություն է, որը նախագծում է ծրագրեր, որոնք շրջանառվում են շահառուների միջև ստանալու նրանց մեկնաբանությունները, պահանջները և մտահոգությունները: Սպառողների հետ հանդիպումներում փորձագիտական գնահատման ընթացքում դրականորեն ընդգծվել է, որ ՀՀ ԱՎԾ-ն միշտ արձագանքում է գրավոր կամ, անհրաժեշտության դեպքում, հրավիրում շահառուներին երկկողմանի հանդիպումների: Այնուամենայնիվ, գնահատող թիմը զգաց, որ ողջ պլանավորման և սպառողի խորհրդատվության գործընթացը պետք է լինի առավել ֆորմալացված, քան այն ներկայումս է: Վիճակագրության Պետական Խորհրդի գործառույթը Հայաստանում ամբողջությամբ տարբերվում է շատ այլ երկրների Խորհուրդներից: Ուստի առաջարկվում է ակտիվացնել արդեն իսկ ստեղծված գիտամեթոդաբանական խորհուրդը, որը նոր կազմով պետք է առաջիկայում և ՀՀ ԱՎԾ-ի նախագահության ներքո վերահսկի և կառավարի վիճակագրական պլանավորման/խորհրդատվական գործընթացը:

Նոր խորհուրդը կկազմվի վիճակագրություն արտադրող այլ կարևորագույն մարմինների ներկայացուցիչներից, ինչպես սահմանված է վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերում, և պետական հատվածի սպառողների հիմնական խմբերից, ինչպես նաև մասնավոր տնտեսության և հասարակության: Կոմիտեն կարող է ստեղծել մշտական կամ հատուկ աշխատանքային խմբեր ընտրված վիճակագրական բնագավառների համար, անհրաժեշտության դեպքում:

Պետական խորհրդին տրված է իրավական իրավունք համակարգելու վարչական վիճակագրությունը, և ի լրումն, լիազորություն ընդունելու ենթաօրենսդրական ակտեր վիճակագրության բնագավառում: Այն հաստատում է

վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերը, իրավունք ունի որոշելու ձևերը, որոնք կարող են օգտագործվել վարչական մարմինների կողմից տվյալների հավաքագրման համար, որոնք կարող են օգտագործվել վիճակագրական նպատակներով և իրավունք որոշելու ստանդարտները ու մեթոդաբանությունները: Խիստ նպատակ է եղել բոլոր պետական մարմինների կողմից վարչական ռեգիստրների ստեղծումը և դրանց արժանահավատության բարելավումը: Խորհրդի և ՀՀ ԱՎԾ-ի ազդեցությունը վարչական ռեգիստրների որակի վրա երևում է, սակայն, ոչ շատ ուժեղ: Պատասխանատվությունը յուրաքանչյուր հաստատության ռեգիստրի որակի համար ընկնում է հաստատության վրա: Փորձագիտական գնահատման ընթացքում հարցված սպառողները բարձրաձայնել են կասկածներ վարչական տվյալների վրա հիմնված վիճակագրության որակի վերաբերյալ: Խորհուրդը և ՀՀ ԱՎԾ-ն մտադիր են բարելավել իրենց համակարգման գործունեությունները և վարչական ռեգիստրների տվյալների որակի իրենց մոնիթորինգը: Դրա համար, առաջարկվում է կազմակերպել ուսուցում վիճակագրության այլ արտադրողների համար տվյալների որակի հասկացողության և բարելավման վերաբերյալ: Սակայն, Խորհուրդը և ՀՀ ԱՎԾ-ն կարող են օգտվել միայն օրենքով իրենց տրված իրավասություններից, եթե նրանք ունեն անհրաժեշտ ռեսուրսներ կատարելու աշխատանքային ինտենսիվ խնդիրներ կապված համակարգման գործունեությունների հետ: Երևում է, որ այդպիսի ռեսուրսները բավականաչափ առկա չեն:

ՀՀ ԱՎԾ-ն կնքել է մի շարք փոխըմբռնման հուշագրեր համագործակցության բարելավման համար վիճակագրության այլ արտադրողների հետ (օրինակ՝ Կենտրոնական Բանկ, Պետական եկամուտների կոմիտե, Էկոնոմիկայի նախարարություն և Արդարադատության նախարարություն: Տրանսպորտի և կապի նախարարությունը տրամադրում է տվյալների Վարչապետի որոշման հիման վրա): Համապարփակ փոխըմբռնման հուշագրեր պետք է կնքվեն հնարավորինս շուտ վարչական վիճակագրության բոլոր արտադրողների հետ, որոնք տրամադրում են նման վարչական վիճակագրություն ՀՀ ԱՎԾ-ին պետական վիճակագրության արտադրման համար: Հուշագրերը պետք է ներառեն մյուս մարմինների երաշխիքը համապատասխանելու Պաշտոնական Վիճակագրության Հիմնարար Սկզբունքներին և Եվրոպական Վիճակագրության Փորձառության Օրենսգրքին և տրամադրելու մարդկային և ֆինանսական ռեսուրսներ իրենց

վիճակագրության իրականացման համար՝ աշխատանքային խմբի ստեղծման հետ մեկտեղ համակարգման գործունեությունների համար: Այդ հուշագրերը պետք է առավել երաշխավորեն ՀՀ ԱՎԾ-ի պարտավորությունը որոշելու ստանդարտներ, տրամադրելու ուղեցույցներ և ցուցաբերելու մեթոդաբանական աջակցություն, ինչպես նաև փոխանակելու տվյալներ գաղտնիության կանոններին համապատասխան:

2. ԼԱՎ ՓՈՐՁԵՐԸ ՊԵՏՔ Է ԿԱՐԵՎՈՐՎԵՆ

- Վիճակագրական համակարգը խիստ կենտրոնացված է, որպես ողջ պաշտոնական վիճակագրություն, կոչված “պետական վիճակագրություն”, արտադրվում է ՀՀ ԱՎԾ-ի կողմից: Հայասանի նման փոքր երկրում նպատակահարմար է կենտրոնացնել պաշտոնական վիճակագրության արտադրումը մեկ հաստատությունում, որպեսզի առավել լավ օգտագործել ռեսուրսները, կենտրոնացնել կրթված և հմուտ վիճակագիրներին մեկ գրասենյակում և բարձրացնել վիճակագրական արտադրման արդյունավետությունը:
- ՀՀ ԱՎԾ-ն մուտք ունի հարկային ռեգիստր առանց սահմանափակումների կամ խնդիրների: Լավ համագործակցություն է հաստատվել՝ կազմակերպելով հատուկ ուսուցում և արտադրելով ձեռնարկներ/դասագրքեր կապված ՏԳՏԴ Խմբ.2 իրականացման հետ հարկային գրասենյակի աշխատակիցների համար: Դա օգնել է բարելավել հարաբերությունները հարկային գրասենյակի հետ և ստանալ հարկային տվյալներին ազատ մուտք:
- ՀՀ ԱՎԾ-ի կողմից հաստատված պրոֆեսիոնալ անկախության համակարգը լավ օրինակ է, թե ինչպես ապահովել պրոֆեսիոնալ անկախությունն անցումային երկրում, որը չունի նման անկախության երկար պատմություն: Այս համակարգը բաղկացած է երեք տարբեր տարրերից, որոնք միասին ապահովում են համեմատաբար ապահով անկախություն կառավարության ազդեցությունից.
- ՀՀ ԱՎԾ-ի նախագահը նշանակվում է երկրի նախագահի կողմից վեց տարի ժամկետով, որը տարբերվում է երկրի նախագահի ժամկետներից: Որպես հետևանք, ՀՀ ԱՎԾ-ի նախագահը չի կարող պաշտոնանկ արվել երկրի նոր նախագահի կողմից: Բացի այդ,

- նշանակման այս մեթոդը նաև ապահովում է ամուր դիրք կառավարության հանդեպ և թույլ է տալիս ուժեղ ուղղորդում այլ վարչական տվյալների աղբյուրների նախագծման վերաբերյալ:
- ՀՀ ԱՎԾ-ի պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատվում է Խորհրդարանի կողմից բոլոր շահառուների հետ խորհրդակցելուց հետո: Սա տալիս է ուժեղ մանդատ ՀՀ ԱՎԾ-ին պաշտոնական վիճակագրությունը հավաքագրելու և արտադրելու համար:
 - Վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագիրը հաստատվում է ՀՀ ԱՎԾ-ի Խորհրդի կողմից, որը նույնպես ներկայացնում է ՀՀ ԱՎԾ-ի ղեկավարությունը: Ծրագրի ֆինանսավորումը տրամադրվում է պետական բյուջեից:
 - Քաղաքացիական ծառայության մասին օրենքի հիման վրա ՀՀ ԱՎԾ-ն ունի լիազորություն և իրավունք տեղափախելու անձնակազմին տարածքային մարմիններից իր կենտրոնական գրասենյակ, ինչն ապահովում է անձնակազմի տեղաբաշխման բավարար ճկունություն:
 - ՀՀ ԱՎԾ-ն ապահովում է բոլոր սպառողների համար հավասար մուտք նոր թողարկվող տվյալներին:

3. Բարելավման գործողությունների ցանկ ըստ Օրենսգրքի սկզբունքի

3.1. Բարելավման գործողություններ՝ Սկզբունք 1. Պրոֆեսիոնալ անկախություն

Բարելավման գործողություններ	Ժամանակացույց
Պետական վիճակագրության մասին օրենքում պաշտոնական վիճակագրության սկզբունքների սահմանումների ներառում:	2016թ.
Պետական վիճակագրության մասին օրենքում ՀՀ ԱՎԾ-ի նախագահի և պետական խորհրդի անդամների ընտրության և նշանակման ընթացակարգերի նկարագրության ներառում:	2016թ.
Ծրագրի պլանավորման գործընթացում առավել ինտեգրված ձևով բոլոր սպառողների խմբերի առավել ֆորմալացված խորհրդատվությունների կազմակերպման համար հայեցակարգի մշակում:	2015թ.
Ուղեցույցի մշակում և հրապարակում, թե ինչպես հրապարակայնորեն մեկնաբանել վիճակագրական խնդիրները, ներառյալ պաշտոնական վիճակագրության քննադատությունները և սխալ օգտագործումները:	2014թ.

3.2. Բարելավման գործողություններ՝ Սկզբունք 2. Մանդատ տվյալների հավաքագրման համար

Բարելավման գործողություններ	Ժամանակացույց
Վիճակագրական նպատակներով բոլոր տեսակի վարչական տվյալներ ՀՀ ԱՎԾ-ի մուտքի և օգտագործելու իրավունքի առավել ճշգրիտ սահմանում օրենքում:	2016թ.

Բարելավման գործողություններ	Ժամանակացույց
<p>Վարչական ռեգիստրների որակի բարելավման համար վարչական տվյալներ տրամադրողների հետ հետագա հուշագրերի կնքում:</p> <p>Բիզնեսների համար հաշվետվական ծանրաբեռնվածությունը նվազեցնելու և ՀՀ ԱՎԾ-ի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Ինտերնետի միջոցով առցանց հաշվետվությունների մշակում:</p> <p>Տնային տնտեսության և գների վիճակագրությունում Համակարգչային Աջակցությամբ Հարցազրույցի (CAI) տեխնիկաների օգտագործման ուսումնասիրում:</p>	<p>2014-2016թթ.</p> <p>2015-2016թթ. (կախված ռեսուրսներից)</p> <p>2015-2016 թթ.</p>

3.3. Բարելավման գործողություններ՝ Սկզբունք 3. Ռեսուրսների համապատասխանություն

Բարելավման գործողություններ	Ժամանակացույց
<p>Ռեգիոնալ գրասենյակներից կենտրոնական գրասենյակ պաշտոնների վերաբաշխման հետ մեկտեղ ՀՀ ԱՎԾ-ի վերակազմակերպման դիտարկում (վարչական ռեգիստրներից ամսեկան և եռամսյակային տեղեկատվության տրամադրման համակարգի ձևավորմանը և առցանց հաշվետվությունների ներդրմանը զուգահեռ):</p> <p>Տեղեկատվական տեխնոլոգիաների համար բավարար ռեսուրսների տրամանդրման խթանում և պետական բյուջեից հետազոտությունների իրականացում:</p>	<p>2016-2018թթ.</p> <p>ընթացիկ</p>

3.4. Բարելավման գործողություններ՝ Սկզբունք 4. Որակի հանձնառություն

Բարելավման գործողություններ	Ժամանակացույց
Բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգումների բաժնի շրջանակում որակի կառավարչի նշանակում:	2014թ.
Որակի կառավարման համակարգի և ասոցացված որակի ապահովման շրջանակի նախագծման համար պլանի մշակում :	2015թ.
Որակի հանձնառության հանրայնացում:	06/2015թ.
Որակի հարցերով ուսուցման իրականացում:	2015 – 2018թթ.
Որակի կառավարման համակարգի և համապատասխան որակի ապահովման շրջանակի իրականացում:	2015 – 2018թթ.

3.5. Բարելավման գործողություններ՝ Սկզբունք 5. Վիճակագրական գաղտնիություն

Բարելավման գործողություններ	Ժամանակացույց
Հետազոտողների նպատակների համար միկրո տվյալների մուտքի և մշակման վերաբերյալ առանձին ուղեցույցի տարածում:	2014թ.
Տվյալների անվտանգության համար տեխնիկական դրույթների ապահովման համար ռազմավարության	2014թ.

Բարելավման գործողություններ	Ժամանակացույց
<p>մշակում:</p> <p>Գաղտնիության վերաբերյալ սպառողին հարմար բացատրության տարածում կայքում:</p>	2014թ.

3.6. Բարելավման գործողություններ՝ Սկզբունք 6. Անկողմնակալություն և օբյեկտիվություն

Բարելավման գործողություններ	Ժամանակացույց
<p>Արդեն իսկ հրապարակված տվյալներում լուրջ սխալների ուղղման և սպառողներին տեղեկացման համար ընթացակարգի նկարագրության մշակում և հրապարակում:</p>	2014թ.
<p>Կայքում տվյալների թողարկման առանձին օրացույցի հրապարակում:</p>	2014թ.
<p>Բոլոր համապատասխան տվյալների համար վերանայման քաղաքականության հրապարակում:</p>	2014թ.
<p>Վիճակագրական թողարկումներին հավասար մուտքի ապահովման համար օգտագործվող մեխանիզմների նկարագրում և հրապարակում:</p>	2014թ.
<p>Մամուլի ասուլիսներին մամուլի հաղորդագրությունների և հայտարարությունների նախապատրաստման ընթացակարգերի հրապարակում և դրանց բովանդակության օբյեկտիվության ապահովում:</p>	2014թ.

3.7. Բարելավման գործողություններ՝ Սկզբունք 7. Հիմնավորված մեթոդաբանություն

Բարելավման գործողություններ	Ժամանակացույց
<p>ՀՀ ԱՎԾ-ի ընտրանքի կատարելագործում, ՀՀ ԱՎԾ-ի շրջանակում մշակված հատուկ ընտրանքային ծրագրային ապահովման իրականացման հետ մեկտեղ:</p>	2015թ.
<p>Մեթոդաբանական աշխատանքի արդիականացում՝ ընտրանքի հարցերի վերաբերյալ խորհրդատվություն առաջարկելով թեմային բաժիններին:</p>	2014-2015թթ.
<p>Վարչական ռեգիստրներից տվյալների օգտագործման ընդլայնում:</p>	2014-2017թթ.
<p>Կենտրոնացված ներքին ուսուցման ծրագրի մշակում և իրականացում (ներառյալ լեզուներ) ողջ անձնակազմի համար:</p>	2015թ.

3.8. Բարելավման գործողություններ՝ Սկզբունք 8. Համապատասխան վիճակագրական ընթացակարգեր

Բարելավման գործողություններ	Ժամանակացույց
<p>Հայաստանի մասնավոր տնային տնտեսությունների հասցեների նոր տվյալների բազայի ստեղծում համաձայն 2011թ. մարդահամարի:</p>	2014 թ.

3.9. Բարելավման գործողություններ՝ Սկզբունք 9. Ռեսպոնդենտների ոչ ավելորդ ծանրաբեռնվածություն

Բարելավման գործողություններ	Ժամանակացույց
<p>Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման տարեկան արդիականացումների իրականացում, հաշվի առնելով հարցաթերթերի միայն կառուցվածքային փոփոխությունները, համակցության չափերը և նոր կամ կարճված վիճակագրությունը:</p>	2014-2018թթ.
<p>Յուրաքանչյուր 5-7 տարին մեկ նոր բազային չափումների սահմանում:</p>	2017թ.
<p>Շարունակել վերամշակել հարցաթերթերը համաձայն ԹՎԻՆԻՆԳ ծրագրի ընթացքում հաստատված մշակման ձեռնարկի և նախապատվություն տալ բարձր ծանրաբեռնվածությամբ, բարձր հաճախականությամբ կամ տվյալների տրամադրման ցածր բավարարվածությամբ ծախսատար հետազոտությունների վերամշակմանը:</p>	2014-2016թթ.

3.10. Բարելավման գործողություններ՝ Սկզբունք 10. Ծախսերի արդյունավետություն

Բարելավման գործողություններ	Ժամանակացույց
<p>Կորպորատիվ ժամանակակից ցանցի ստեղծում ռեգիոնալ գրասենյակների հետ:</p>	2014թ. (կախված ռեսուրսներից)

3.11. Բարելավման գործողություններ՝ Սկզբունք 11.

Համապատասխանություն

Բարելավման գործողություններ	Ժամանակացույց
Սպառողների հետ հաղորդակցման ինտենսիվացում սպառողների բավարարվածության հետազոտությունների միջոցով, և առկա վիճակագրությունը վերանայելու համար և զարգացող տվյալների պահանջները բացահայտելու համար պլանավորման ընթացակարգերի ծրագրի հետագա բարելավում:	2014-2017թթ.

3.12. Բարելավման գործողություններ՝ Սկզբունք 12. Ճշգրտություն և արժանահավատություն

Բարելավման գործողություններ	Ժամանակացույց

3.13. Բարելավման գործողություններ՝ Սկզբունք 13.

Յուրաժամանակություն և ճշտապահություն

Բարելավման գործողություններ	Ժամանակացույց
ՀՀ ԱՎԾ-ի տվյալների յուրաժամանակության բարելավման համար սպառողների կարիքների ուսումնասիրում, և ՀՀ ԱՎԾ-ի տվյալների յուրաժամանակության համեմատում միջազգային յուրաժամանակության ստանդարտների հետ:	2015թ.

3.14. Բարելավման գործողություններ՝ Սկզբունք 14.

Համաձայնեցվածություն և համադրելիություն

Բարելավման գործողություններ	Ժամանակացույց

3.15. Բարելավման գործողություններ՝ Սկզբունք 15. Մատչելիություն և պարզություն

Բարելավման գործողություններ	Ժամանակացույց
Տարածման քաղաքականության մշակում և հրապարակում:	2015թ.
Կայքում առկա մեթատվյալների վերակարգավորում:	2014թ.
Մեթատվյալների ստանդարտների սահմանում:	2014թ.
Մեթատվյալների մշակում համաձայն ընտրված միջազգային ստանդարտների:	2015-2019թթ.
Հայցերով ուսումնասիրության հրապարակում կայքում:	2015/ընթացիկ
Սպառողների համար սիստեմատիկ ուսուցման ծրագրի մշակում:	2014թ.
Տարածման մեկ տվյալների բազայի մշակում:	2018թ. (կախված ռեսուրսներից)

3.16. Բարելավման գործողություններ՝ Ազգային վիճակագրական համակարգի համակարգում

Բարելավման գործողություններ	Ժամանակացույց
ՀՀ ԱՎԾ-ում առկա գիտամեթոդական խորհրդի կազմի փոփոխում և ակտիվացում վերահսկելու և կառավարելու պլանավորման/ սպառողի խորհրդատվության գործընթացը, որը առավել ֆորմալացված կլինի ապագայում:	2015թ.
Տվյալների որակի ընկալման և բարելավման վերաբերյալ վիճակագրության այլ արտադրողների ուսուցման կազմակերպում:	2015թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1 ԹՓԳ-ի օրակարգը

2 Հայաստանի Հանրապետության օրենքը "Պետական վիճակագրության մասին"